ՀԱՅԵՐԵՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՎԱԳԱԳՈՒՅՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

(«Լրաբերի» 30-ամյակի առթիվ)

Հայ մամուլի պատմությունից հայտնի է, որ հայերեն թերթերն ու պարբերականները 1794 թ. սկսած, երբ Մադրասում լույս տեսավ «Ազդարար» ամսագիրը, որքան հաճախ էին ապարեզ գալիս, նույնքան արագ էլ մարում էին՝ մեծ մասամբ հազիվ մի քանի տարվա կյանք ունենալով։ Ոչ լրիվ տվյալներով մինչ 1934 թ. լույս տեսած հայերեն ավելի քան 1750 պարբերականներից երեսուն տարուց ավելին են տևել միայն 16 անուն թերթեր և ամսագրեր։

Առավել վատթար էր հայ գիտական պարբերականների վիճակը։ Բնորոշ է, որ առաջին պարբերականը, որ հավակնություն ուներ լուսաբանել զուտ գիտական հարցերը՝ «Մետեորան» հազիվ երկու տարի գոյություն ունեցավ։

Նյութական անապահովությունն ու տիրող կարգերը թե՛ Արևելյան Հայաստանում և թե՛ մանավանդ Արևմտյան Հայաստանում ոչ միայն չէին նպաստում գիտական մտքի, հետևապես և գիտական մամուլի զարգացմանը, այլև կաշկանդում ու հալածում էին գիտությամբ զբաղվելու ամեն մի փորձ։ Արևմտահայ գործիչ Պողոս Մելիքշահյանը (1788—1855), որ ստացել էր Ֆիզիկա Պողոս անունը, բնական գիտություններով զբաղվելու հնարավորություն չունենալով, իր տնային պայմաններում էր փորձեր կատարում, թանգարան հիմնում և մինչև կյանքի վերջն էլ չկարողացավ երևան հանել իր բնական մեծ տաղանդի պտուղները։ Մի այլ գիտնական, մատերիալիստ-բնագետ Գալուստ Կոստանդյանը (1840—98) գիտական-հրատարակչական գործունեությունը սկսելով տակավին տասնհինգ տարեկանում, զմյուռնահայ իրականության մեջ իր հանրագիտական գործունեությունից կարողացավ հրապարակ հանել լոկ մի հատոր՝ «Մեթոդի վրա» գիրքը։ Ուժերի ծաղկման շրջանում վախճանված մեծ բնագետը, որ կոչում ուներ ավետելու «գիտական մտքի հաղթանակը» և համաշխարհային գիտության նվաճումները մեզանում պրոպագանդող ու պաշտպանող ռահվիրան եղավ, մեծագույն հավատ ուներ գիտության հանդեպ, կանխագուշակում էր, որ XX դարը «մեծ դար մը պիտի ըլլա», որ նա «ընկերային գիտությանց նորանոր լույսեր» պետք է բերի։

Հակառակ գործադրված բոլոր ջանքերին և հայ ականավոր գործիչների բոլոր ձգտումներին գիտական որևէ օջախ այդպես էլ չհաջողվեց ստեղծել, իսկ գիտությամբ զբաղվող առանձին էնտուզիաստներ մշտապես անլուր տառապանքների գնով էին գլուխ բերում այս կամ այն գործը՝ դասվելով եզակի երջանիկների թվին։ Հայտնի հրապարակախոս, բժիշկ-հասարակական գործիչ Ն. Տաղավարյանը հիմնելով «Գիտական շարժում» ամսագիրը, պատրաստ էր «ի հարկին նույնիսկ զոհելու» իր ինչքը, բայց հազիվ կարողացավ երեք տարի պահպանել պարբերականը։

Բնորոշ է հայ ճարտարապետության երախտավոր Թորոս Թորամանյանի օրինակը։ Այն ինչ հաջողվեց անել նրան, հաջողվեց լոկ իր անհուն եռանդի գնով։ Ավելի ողբերգական եղավ հայկական առաջին գիտական օջախի տնօրենի՝ Լևոն Լիսիցյանի ճակատագիրը։ Մեծ պատրաստություն ունեցող երիտասարդը, ինչպես արտահայտվել է Հովհ. Թումանյանը, նշանակվելով էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի (ձեռագրատան ու թանգարանի) կոմիսար, նոր էր ձեռնամուխ եղել ազգայնացված հայ հին ձեռագրատան կարգավորմանը, երբ 1921 թ. բռնկեց փետրվարյան ավանտյուրան։ Գիտնական-դասախոսն ընկավ ժողովրդի գիտական արժեքների պաշտպանության դիրքում՝ հենց ձեռագրատան կամարների տակ։

Միայն սովետական կարգեր հաստատվելուց հետո բուն Հայաստանում ստեղծվեցին բարձրագույն ուսումնական հաստատություններ և առաջին հերթին Երևանի պետական համալսարանը։ Մեր հանրապետության առաջին գիտական օջախին հաջորդեցին նոր բուհեր ու գիտական հաստատություններ։ Հրաչյա Աճառյանը, Ստեփան Մալխասյանը, Մանուկ Աբեղյանը, Հակոբ Մանանդյանը, Ստեփան Ղամբարյանը, Ալեքսանդր Թամանյանը, Հովսեփ Տեր-Աստվածատուրյանը, Լեոն դարձան գիտության առաջամարտիկները։ Բազմաթիվ գիտնականներ պատրաստություն ստացան Մոսկվայի և Լենինգրադի գիտական օջախներում։ Ռուս շատ գիտնականներ նշանակալից դեր կատարեցին Սովետական Հայաստանի գիտության զարգացման գործում, աճեցրին հայ գիտնականների մի ամբողջ սերունդ։

1935 թ. ստեղծվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալը, որը շուտով՝ 1943-ին վերակազմակերպվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի։ Դրանով իրագործվեց հայ ժողովրդի նվիրական նպատակը։ Ընդամենը կես դարում Սովետական Հայաստանը դարձավ գիտության առաջնակարգ օջախ։

Գիտության զարգացման կարևորագույն պայմաններից մեկը,— իրավամբ նկատել է ակադեմիկոս Վ. Համբարձումյանը,— գիտական ամսագրերի ստեղծումն է՝ տարբեր մասնագիտությունների գծով։ Հենց որ Սովետական Հայաստանում հիմնվեցին առաջին գիտական հիմնարկությունները և ուսումնական հաստատությունները հանդես եկան նաև առաջին տպագիր գիտական օրգանները։ Իսկ այդ գործն անհրաժեշտ ընթացք ստացավ միայն հանրապետության գրությունների ակադեմիայի կազմակերպումից հետո։ Այժմ ակադեմիան հրատարակում է մի ամբողջ շարք գիտական պարբերականներ։

Այդ պարբերականների լոկ թվարկումը ցույց է տալիս, որ այժմ գիտական հրատարակությունների գործը մեծ ծավալ է ստացել։ Կանոնավորաբար հրատարակվում են ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պարբերականները՝ «Հայաստանի կենսաբանական հանդես», «Մաթեմատիկա», «Մեխանիկա», «Ֆիզիկա», «Հայկական քիմիական ամսագիր», «Պատմա-բանասիրական հանդես», «Արյան շրջանառություն», «Էքսպերիմենտալ և կլինիկական բժշկության հանդես», «Գիտություն երկրի մասին», որոնք հրատարակվում են տարեկան 630 մամուլ ծավալով՝ 185 500 ընդհանուր տպաքանակով։ Հայ գիտական մամուլի զարգացման նշանակալից փաստերից մեկն է «Աստրոֆիզիկա» ամսագիրը՝ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի խմբագրությամբ։ Դրանց զուգահեռ հրատարակվում են դանազան ժողովածուներ, տեղեկագրեր ու զեկույցներ, այդ թվում «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի զեկույցները» սկսած 1944 թ., տարեկան տասը համար և «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տեղեկագիրը» (տեխնիկական գիտությունների սերիա)՝ 1957 թ.։

Ակադեմիայի գիտական պարբերականների շարքում իր հատուկ տեղն ունի մեր հանրապետության ավանդույթ գիտական ամսագիրը՝ «Լրաբեր հասարակական գիտություններից» (մինչև 1966 թ.՝ «Տեղեկագիր»)։

«Տեղեկագիրը»՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի միակ պարբերական օրգանը, սկսել է հրատարակվել 1940 թ.՝ ֆիլիալի նախագահության որոշումով և ընդգրկում էր ինչպես բնական, այնպես էլ հասարակական գիտությունները։ Պարբերականի անդրանիկ համարը, որը տպագրության է հանձնվել հունիսի 29-ին, լույս է տեսել 242 էջ ծավալով, 1000 օրինակ տպաքանակով։ Բազմազան է ու հարուստ ամսագիր № 1—2 միացյալ համարի բովանդակությունը։ Խմբագրականից, Ս. Կարապետյանի, Ս. Բուդումյանի, Էդ. Թոփչյանի հոդվածներից բացի նրանում հանդես են եկել դրականագետներ, կենսաբաններ ու պատմաբաններ։ Գրականագետ Խ. Սարդսյանի և կենսաբանության պատմաբան Ռ. Գաբրիելյանի ուսումնասիրությունները նվիրված են Միքայել Նալբանդյանին, իսկ Հ. Բատիկյանի և Ս. Պողոսյանի հետազոտությունները՝ Չարլզ Դարվինին։ Հայագետ Ստ. Մալխասյանը «Տեղեկագրի» անդրանիկ համարում հրատարակել է «Մովսես Խորենացու մասին» իր ուսումնասիրությունը, իսկ Ա. Փանոսյանի ու Ռ. Միրզաբեկյանի համատեղ հետազոտությունը նվիրված է ծիրանենիների բակտերիալ հիվանդությանը։ Համարում ընդարձակ ինֆորմացիա է տեղավորված Արմֆանի 1939 թ. գործունեության մասին, ինչպես և գրախոսված են Հ. Մանանդյանի «Տիգրան Բ և Հռոմ», պրոֆ. Խ. Սամվելյանի «Հին Հայ իրավունքի պատմություն» աշխատությունները։

«Տեղեկագրի» անդրանիկ խմբագրական կոլեգիայի կազմի մեջ էին մտնում Ս. Կ. Կարապետյանը (պատասխանատու խմբագիր), Բ. Մ. Հարությունյանը (պատասխանատու քարտուղար), Հ. Մ. Մելիքյանը, Հ. Խ. Բոնիաթյանը, Ա. Ա. Ֆեոդորովը։ Այդ կազմը, բացառությամբ պատասխանատու խմբագրի, որի պարտականությունները 2-րդ համարից ֆիլիալի նախագահությունը դրեց Հ. Գ. Բատիկյանի վրա, հրատարակել է «Տեղեկագրի» առաջին յոթ համարները։ 1941 թ. № 3—4-ից պարբերականի խմբագրական կոլեգիան լրացվել է։ Նրա կազմի մեջ մտան Գ. Հովնանը (պատասխանատու խմբագրի տեղակալ), Ս. Ա. Մովսիսյանը և Մ. Գ. Ներսիսյանը։ Որոշ ժամանակ՝ 1941 թ. № 9-ից սկսած, «Տեղեկագիրը» հրատարակվում էր «Խմբագրական կոլեգիա» ստորագրությամբ, իսկ 1943 թ. 2-րդ համարից դրան զուգահեռ համարների թողարկման պատասխանատու խմբագիրը եղել է Խ. Մոմջյանը, որը հետագայում դարձավ պարբերականի հասարակական գիտությունների սերիայի խմբագիրը։ «Տեղեկագրում» նյութերը զետեղվում էին հայերեն կամ ռուսերեն լեզուներով։

Պարբերականի սկզբնական պրոֆիլը պահպանվել է նաև հետագա տարիներին՝ մինչև 1943 թ.։ Այդ ընթացքում՝ 1940—42 թթ. լույս են տեսել «Տեղեկագրի» 24 համարները։ Նրա էջերում հան-

դես են եկել հնագետներ, բանասերներ, կենսաբաններ, քիմիկոսներ, լեզվաբաններ, պատմաբաններ, գրականագետներ, երկրաբաններ, արվեստագետներ, գրողներ։ Համապատասխանաբար բազմազան է նաև պարբերականի այդ տարիների բովանդակությունը։ Գլխավոր ուշադրությունը դարձնելով ժողովրդական տնտեսության զարգացմանը նպաստող խնդիրներին, «Տեղեկագիրը» դգալի տեղ է հատկացրել կենսաբանությանը, երկրաբանությանը, պտղաբուծությանը, հանրապետության օգտակար հանածոների հետազոտմանն ու արդյունահանմանը, էներգետիկ ռեսուրսների օգտագործմանը, առանձին շրջանների տնտեսություններին, քիմիայի կարևոր պրոբլեմներին, բերքատվության ու հողաշինարարության հարցերին։ Պարբերականում նրանց արժեքավոր հետազոտություններով, մեկից ավելի անգամ, այնուհետև հանդես են եկել Հ. Խ. Բունիաթյանը, Ա. Հ. Ջիթչյանը, Ա. Ա. Ֆեոդորովը, Պ. Դ. Ցարոշենկոն, Ա. Ա. Ռիխտերը, Ա. Ն. Վերմիշևը, Ս. Հ. Մովսիսյանը, Ա. Թարախչյանը, Մ. Մ. Դանիելյանը, Ս. Ա. Տեր-Դանիելյանը, Վ. Հ. Գուլքանյանը, Ս. Գ. Հովհաննիսյանը, Ս. Ա. Վարդանյանը, Վ. Ի. Խաղուլյանցը, Ն. Մուշեղյանը, Մ. Ի. Տեր-Մինասյանը, Ա. Գ. Արարատյանը։

Բովանդակությամբ հարուստ ու ընդգրկման շրջանակներով լայն է պարբերականի հասարակական գիտությունների զանազան ասպարեզներին նվիրված նյութերի ցանկը։ «Տեղեկագրի» առաջին համարներում հանդես է եկել Բ. Բ. Պիոտրովսկին, որը հրապարակել է Կարմիր բլուրում կատարված պեղումների արդյունքները։ Հնագիտության առանձին հարցերին նվիրված ուսումնասիրություններ են լույս ընծայել Լ. Մ. Մելիքսեթ-Բեկը, Ս. Վ. Տեր-Ավետիսյանը, Կ. Ղաֆադարյանը, Ն. Մ. Տոկարսկին։ Մեծ տեղ տալով հայ ժողովրդի պատմության ու մշակույթի լուսաբանմանը, «Տեղեկագիրը» յուրաքանչյուր համարում զետեղել է անվանի գիտնականների և երիտասարդ գիտաշխատողների նորագույն հետազոտությունները, նպաստել առանձին խնդիրների ու պրոբլեմների գիտական լուսաբանմանը, ճշտել է այս կամ այն հարցը, պարզաբանել է բազմաթիվ փաստեր։ Ակտիվորեն աշխատակցելով պարբերականին, պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկը հրապարակել է առանձին պատմական վավերագրեր, արծարծել չափագիտության հարցերը, վերծանել արձանագրություններ, լուսաբանել է Շ. Ռուսթավելուն և նրա պոեմին, Գ. Սունդուկյանի կենսագրությանը վերաբերվող մի շարք հարցեր։

Հայագիտության պատրիարքների՝ Մանուկ Աբեղյանի և Հրաչյա Աճառյանի հետ միաժամանակ, «Տեղեկագրի» առաջին տարիների համարներում հանդես են եկել Հ. Գուլիքևխյանը, Բ. Առաքելյանը, Մ. Ներսիսյանը, Ս. Երեմյանը, Գ. Ղափանցյանը, Խ. Սարգսյանը, Ա. Ղարիբյանը, Բ. Հարությունյանը, Վ. Պարսամյանը, Բ. Շելկովնիկովը, Ս. Շալչյանը և ուրիշներ։ Նրանց ուսումնասիրությունների շնորհիվ պարզաբանվել են հայ մշակույթի բազմաթիվ կարևոր հարցեր, պիտանորեն հիմնավորվել են ու ճշտվել առանցքային ոչ քիչ թվով խնդիրներ։

Հայ առաջին գիտական կանոնավոր պարբերականում աստիճանաբար ամրապնդվել են այն սկզբունքները, որոնք որոշել են նրա ճիշտ դրվածքը և օրինակ հանդիսացել զուգահեռաբար և հետագա տարիներին հրատարակված գիտական մամուլի համար։ «Տեղեկագիրը» համաքայլ է ընթացել կյանքի պահանջներին, ակտիվորեն միջամտել է գիտական մտքի կազմակերպմանն ու ուղղությանը, խթանել է հայագիտության առանցքային հարցերի պարզաբանմանը։

Նորաստեղծ պարբերականի համար բնորոշ է իր աշխատանքի արագ վերակառուցումը և նպատակասլաց դարձնելը Հայրենական մեծ պատերազմի տարիներին։ «Տեղեկագրի» 1941 թ. № 5—6 (10—11) միացյալ համարը (160 էջ) գրեթե ամբողջապես նվիրված է երկրի և ժողովրդի առջև ծառացած գլխավոր՝ հայրենիքի պաշտպանության և ազատագրության խնդրին։ Ամսագրի խմբագիր Հ. Բատիկյանը հանդես է եկել «Ֆաշիստական բարբարոսների ռասայական թեորիան» հոդվածով, Հ. Գյուլիքևխյանը՝ ֆաշիզմի պարագլուխ Ադոլֆ Հիտլերի «Իմ պայքարը» գրքի՝ մարդակերների գործողության ձեռնարկի համակողմանի մերկացմամբ։

Այդ համարում զետեղված Գուրգեն Հովնանի ուսումնասիրությունը նվիրված է ռուս մեծ ժողովրդի մշակույթին, Մ. Ներսեսյանը հրապարակել է 1812 թ. հայրենական պատերազմին նվիրված արխիվային մի նոր փաստաթուղթ, Վ. Պարսամյանը լուսաբանել է Դենիս Դավիդովի գլխավորությամբ մղված պարտիզանական պայքարը՝ Նապոլեոնի հորդաների դեմ։ Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության առանձին էջերը լուսաբանելով, Բ. Առաքելյանը՝ «Հայերի ապստամբությունը արաբական լծի դեմ 703 թվին», Մ. Ներսիսյանը՝ «Դավիթ Բեկի շարժման արձագանքները Վասպուրականում և հարևան գավառներում», Աշ. Աբրահամյանի՝ «Ռուքն-էդ-դինի չախչախումը», Մ. Աբեղյանը՝ «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ», Ս. Շալչյանը «Դելիմիկները և նրանց արշավանքները դեպի Հայաստան» թեմաներում, հայ ժողո-

վրդի հերոսական անցյալի օրինակով, համաժողովրդական պայքարի կոչ էին անում սովետական երկրի վրա արշավող ֆաշիստական զավթիչների դեմ։

Պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում «Տեղեկագրի» գլխավոր թեման եղել է ժողովրդի ազատագրական պայքարը ընդդեմ ֆաշիզմի, հանուն իր ազատության ու մեծ Հոկտեմբերի նվաճումների պաշտպանության։ Նրա էջերում հրատարակվել են հայ ականավոր գրողների ու մշակույթի գործիչների դիմումը արտասահմանի հայությանը, «Պրավդայի» օգոստոսի 17-ի խմբագրականը՝ «Հայ ժողովուրդը—սովետական ժողովրդի ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է», Էդ. Թոփչյանի ուսումնասիրությունը նվիրված է գեղարվեստական գրականության մեջ ֆաշիզմի դեմ մղվող պայքարի պատկերմանը, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի առանձին դրվագները և դրանց արտացոլումը հայ գրողների և բանաստեղծների երկերում մեծապես խթանում էին ֆաշիզմի դեմ դուռ համարտի ելած մեր ժողովրդի մարտական ոգու բարձրացմանը, նրան ոտքի հանում ընդդեմ սովետական բոլոր ժողովուրդների ոխերիմ թշնամու, որ շարժվում էր դեպի երկրի խորքը, դեպի Կովկաս։ Եվ պատահական չէ, որ «Տեղեկագրի» էջերում հրապարակվում են բազմաթիվ ուսումնասիրություններ՝ նվիրված Կովկասի լեռնանցքները սասունցիների կողմից պաշտպանելուն, XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ պոեզիային, Խ. Արովյանի ու Մ. Պեշիկթաշլյանի հայրենասիրական ստեղծագործություններին, հայ և վրաց ժողովուրդների բարեկամությանը, հայ նետաձիգների սխրագործություններին, սովետական գրականության մեջ հերոսականության գաղափարի արտացոլմանը, քրդական ֆոլկլորի հայրենասիրական մոտիվներին (Ս. Երեմյան, Խ. Սարդսյան, Հ. Գյուլիքեվխյան, Ա. Ինճիկյան, Ն. Ռոմանյան, Ս. Շալչյան, Ռ. Վարգազարյան, Հ. Ջնդի)։ Ոչ միայն իրենց ուսումնասիրություններով, այլև գերմանական զավթիչների դեմ մղված մարտերին անմիջական մասնակցությամբ, «Տեղեկագրին» աշխատակցող շատ հեղինակներ իրենց հայրենասիրական պարտքն էին կատարում երկրի ու ժողովրդը առջև։ Պարբերականի էջերում այդ տարիներին հրատարակվում են նաև արժեքավոր վավերաթղթեր, այդ թվում՝ ռազմի դաշտում հերոսությամբ աչքի ընկած հայ ժողովրդի զավակների դրառումները (օրինակ, Պ. Գազազյանի օրագիրը 1943 թ. № 3, Վ. Վարդանյանի օրագիրը՝ 1944 թ. № 3—4), ինչպես նաև Հայրենական պատերազմի թեմատիկայով գրված ստեղծագործությունների վերլուծություններ ու առանձին հոդվածներ՝ հայ ռազմիկների և զորահրամանատարների (Ս. Ս. Մարտիրոսյան) մասին։

Կուսակցության կենտրոնական օրգանի «Պրավդայի» երեսունամյակի առթիվ կայացած գիտական սեսիայի մասին հաղորդում տպագրելուց բացի, «Տեղեկագիրը» սեսիայի նյութերին տրամադրել է մի ամբողջ համար (1942 թ., № 5)՝ զետեղելով Մ. Պետրոսյանի, Հ. Գյուլիքեվխյանի, Խ. Սարդսյանի և Աս. Առատրյանի զեկուցումների տեքստերը։ Հայաստանում սովետական իշխանության հասաատման 20-րդ տարեդարձին է նվիրված պարբերականի 1940 թ. № 4—5 միացյալ համարը։

Հարուստ է պարբերականի գրախոսության բաժինը։ «Տեղեկագրի» առաջին տարիներին հրատարակված 24 համարներում լույս են տեսել երկու տասնյակ գրախոսականներ և ընդարձակ մատենագրական տեսություններ։ Ստ. Զորյանը, Արտ. Կարինյանը, Հ. Աճառյանը, Ստ. Լիսիցյանը, Ն. Տեր-Մինասյանը պարբերականում հրատարակած իրենց գրախոսականներով մեծապես նպաստել են ժամանակի գիտական ժառանգության գնահատությանը, խթանել են աշխատությունների գիտական ու տեսական մակարդակի բարձրացմանը, արժեքավոր գիտողություններով օգնել են հեղինակներին, ինչպես նաև երիտասարդ գիտական սերնդի դաստիարակությանը։

Սովետական Հայաստանում գիտության բուռն զարգացումը և գիտական կադրերի արագ աճն անհետաձգելի պահանջ էին առաջադրում ընդարձակել ակադեմիական միակ պարբերականը, լայն հնարավորություններ ստեղծել թե՛ հասարակական և թե՛ բնական գիտությունների զարգացման համար։ Եվ 1943 թ. պատերազմական ծանր ժամանակաշրջանում, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի «Տեղեկագիրը» սկսեց լույս տեսնել երկու առանձին (I և II) սերիաներով՝ հասարակական գիտությունների և բնական գիտությունների, յուրաքանչյուրը գրեթե նույն ծավալով և միևնույն տպաքանակով (400 օրինակ)։

Ուրվագծել «Տեղեկագրի» («Լրաբեր») երեսնամյա ուղին գրեթե նշանակում է փորձել ի մի բերելու սովետահայ հասարակական գիտությունների նվաճումներն այդ տարիներին։ Պարբերականը, որը սկսած 1948 թ. (բացառությամբ 1949 թ., երբ հրատարակվեց 10 համար) լույս էր տեսնում ամեն ամիս, իր էջերում տեղ է տվել գիտությունների ակադեմիայի շրջանակներում հասարակական գիտությունների ուղղությամբ կատարված նորագույն ուսումնասիրություններին, զուգահեռաբար հրատարակելով նաև այն արժեքավոր հետազոտությունները, որ իրագործվել են

հանրապետության բուհերում և մյուս գիտական հաստատություններում, ներառյալ նաև օտարազգի հայագետների շատ հոդվածները։

Ամենից առաջ և ամենից հաճախ ամսագրի համարներում զետեղվել են հեղափոխական վերակառուցման համար, հին կարգերի դեմ հայ ժողովրդի պայքարն արտացոլող նյութերը, նրա դարավոր ազգային-ազատագրական շարժումներին նվիրված թեմաները, սովետական կարգերի հաղթանակի ու ամրապնդման, սոցիալիստական շինարարության համար ծավալած նրա բուռն գործունեությունն ու ձեռք բերած մեծագույն նվաճումներն ընդհանրացնող հետազոտությունները։

Իր ստեղծման առաջին իսկ տարիներից ամսագրում կենտրոնական տեղ է գրավել լենինյան թեմատիկան, որի լուսաբանումը սկսվել է Մ. Ներսիսյանի արժեքավոր ուսումնասիրությամբ՝ «Լենինը և հայ ժողովրդի ազատագրումը» (1940, № 4—5)։ Հայ գիտնականները «Տեղեկագրում» («Լրաբեր») հրատարակած իրենց ուսումնասիրություններում հանգամանորեն ու բազմակողմանի լուսաբանել են մեծ Լենինի կյանքն ու գործունեությունը, նրա ուսմունքը, նրա տիտանական պայքարը նոր տիպի կուսակցության, նրա անաղարտության համար, ցարական կարգերի տապալման և աշխարհում առաջին սոցիալիստական պետության ստեղծման համար։ Առանձին հոդվածներ են նվիրվել Լենինյան աշխատություններին ու դեկրետներին, Լենինի գաղափարների տարածմանը հայ իրականության մեջ, նրա վճռական դերին Անդրկովկասում հեղափոխական շարժումների ծավալման, սովետական կարգերի հաղթանակի, մասնավորապես Անդրֆեդերացիայի, ապա և ՀՍՍՀ-ի ստեղծման գործում։ Հատուկ հոդվածներ են հրատարակվել այնպիսի հրատապ հարցերի շուրջը, ինչպիսիք են Լենինը և Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, Թուրքահայաստանի մասին Լենինյան դեկրետի նշանակությունը, ազգային շարժումների տեղն ու դերը, հայ ժողովրդի ազատագրության գործում Վ. Ի. Լենինի դերը և այլն։ Մի շարք հոդվածներում ընդհանրացվել է Լենինի կերպարի արտացոլումը սովետահայ բանահյուսության, գրականության ու արվեստի մեջ։ Լենինյան թեմատիկան ամսագրում զգալի տեղ է գրավել հատկապես մեծ առաջնորդի ծննդյան 100-ամյակի տոնակատարության ժամանակաշրջանում՝ սկսած 1967 թ. № 1-ից, երբ հրատարակվեց առաջին հոդվածն այդ առթիվ՝ ներառյալ «Լրաբերի» այս տարվա չորրորդ համարը, որն ամբողջապես նվիրված է Վ. Ի. Լենինին։

Իր գլխավոր խնդիրներից մեկը համարելով Հայաստանում հեղափոխական շարժումների, սովետական կարգերի հաղթանակի համար բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության պատմության լուսաբանումը, ամսագիրը պարբերաբար գիտական հանգամանալից ուսումնասիրություններ է նվիրել ՌՍԴԲԿ Կովկասյան միության և հայ մարքսիստական խմբերի գործունեությանը, Ալեքսանդրապոլի բոլշևիկների պայքարին, Լոռում, Ղարսում, Հաղպատում, Նոր Բայազետում, Ղազախ-Շամշադինում, Զանգեզուրում ծավալված հեղափոխական շարժումներին, հայ աշխատավորության մղած դասակարգային կռիվներին։ Մեծ տեղ են գրավել հեղափոխական շարժումներին, մասնավորապես Հոկտեմբերյան մեծ հեղափոխությանը, և Հայաստանում նրանց արձագանքներին նվիրված թեմաները, ինչպես և Անդրկովկասում և Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը լուսաբանող հոդվածները, այդ թվում Բաքվի, Թբիլիսիի և Բաթումի պրոլետարիատի մղած պայքարը գիտականորեն ընդհանրացնող նյութերը։

Հայ ժողովրդի լենինյան-հեղափոխական սերնդի գործունեության լուսաբանումը մշտապես աչքի ընկնող տեղ է գրավել «Տեղեկագրի» («Լրաբեր») էջերում։ Ալ. Մյասնիկյան, Ստ. Շահումյան, Ս. Սպանդարյան, Բ. Կնունյանց, Կամո (Ս. Տեր-Պետրոսյան), Ի. Լալայանց, Վ. Կասումով, Ս. Կասյան, Ա. Մռավյան, Բ. Ղարիբջանյան, Ստ. Ալավերդյան, Ա. Շահինյան, Ա. Ամիրյան, Մ. Մելիքյան, Ա. Վերմիշև, Ար. Հովվյան, Ի. Լազյան. Ս. Լուկաշին, Ար. Մելիքյան, Դ. Խախանյան, Հ. Բժշկյան (Դայ), Գ. Հովսեփյանց, Հով. Սարուխանյան, Բաքվի 26 կոմիսարներ,— ահա ոչ լրիվ ցանկն այն հեղափոխական գործիչների, որոնց կյանքին ու գործունեությանը նվիրված հետազոտություններ են լույս տեսել ամսագրի էջերում։ Ամսագիրը մասնավորապես մեծ թվով նյութեր է հրատարակել նվիրված աննկուն Լենինյան Ստեփան Շահումյանին՝ ընդգրկելով նրա ամբողջ կյանքն ու գործունեությունը՝ սկսած նրա վաղ շրջանի հեղափոխական քայլերից մինչև նրա հերոսական մահը։ Տարբեր տարիների գիտական հոդվածներ են նվիրվել Շահումյանի հայացքներին, նրա պայքարին՝ լենինյան տակտիկական գծի, բոլշևիկյան կուսակցության անաղարտության համար, նրա դերին Անդրկովկասում և Հայաստանում հեղափոխական շարժումների ծավալման գործում, նրա հայացքներին հայ ժողովրդի պատմության մասին, ազգային ծրագրի ու պետության շուրջը, նրա կյանքին ու գործունեության առանձին բնագավառներին։

«Տեղեկագրի» («Լրաբեր») գրեթե ամեն համարում զետեղվել են նյութեր՝ նվիրված կոմունիստական շինարարության համար հայ ժողովրդի մղած պայքարին։ Դա է եղել ամսագրի գլ-

խավոր թեման։ Պատկառելի է սովետական տարիներին հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումներն բովանդակացնող ամսագրի նյութերի ցանկը, որով կարելի է գրեթե ամբողջական պատկերացում կազմել վերջին հիսուն տարիներին հայ ժողովրդի անցած ուղու մասին, ՀՍՍՀ ծաղկման ու բարգավաճման մասին, այն աննախադեպ վերելքի մասին, որ ապրել է սոցիալիստական հայ ազգը սովետական կարգերի շնորհիվ՝ բոլոր ասպարեզներում։ Առանձին դեպքերում, օրինակ՝ Սովետական Հայաստանի 25-րդ և 40-րդ տարեդարձների առթիվ, ամսագրի խմբագրությունը այդ թեմաներին է հատկացրել ամբողջական համարներ՝ դրանք հրատարակելով շքեղ, սովորականից ավելի մեծ ծավալով ու տպաքանակով։ Ավագ սերնդի գիտնականների և երիտասարդ գիտաշխատողների ջանքերով ընդհանրացվել է սոցիալիստական շինարարության փորձը, ամփոփվել ու գիտական պատշաճ մակարդակով լուսաբանվել են ժողովրդական տնտեսության ու մշակույթի տարբեր բնագավառներում, մասնավորապես արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրական շինարարության բնագավառում Հայկական ՍՍՀ-ի աշխատավորության ձեռք բերած նվաճումները։ Այդ նյութերն ամբողջությամբ վերցրած տալիս են հանրագումարն այն հերոսական պայքարի, որ մղել է հայ ժողովուրդն իր զարգացման ու վերածննդի համար՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, սովետական կարգերի ընձեռած պայմաններում։

Ամսագիրն իր լուրջ ավանդն է ներդրել Սովետական Հայաստանի պատմության, մեր հանրապետությունում սոցիալիստական շինարարության ընթացքը սիստեմավորված լուսաբանելու և ընդհանրացնելու գործում։ «Տեղեկագիրն» է փաստորեն առաջին անգամ սկսել ակնարկների ձևով հրատարակել (1950 թ.) Սովետական Հայաստանի երեսունամյա սոցիալիստական ուղին լուսաբանող նյութեր, «Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», «Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման և խաղաղ աշխատանքներին անցնելու սկզբնական շրջանում (1921—1922 թթ.)», «Սովետական Հայաստանը երկրի ինդուստրացման համար մղվող պայքարում», «Սովետական Հայաստանը սոցիալիզմի հաղթանակի ժամանակաշրջանում», «Սովետական Հայաստանը գյուղատնտեսության կոլեկտիվացման համար մղվող պայքարի ժամանակաշրջանում (1930—1934 թթ.)», «Հայկական ՍՍՀ-ն ժողովրդական տնտեսության երկրորդ հնգամյակի առաջին տարիներին (1933—34 թթ.)», «Սովետական Հայաստանը 30 տարում» ուսումնասիրությունների հրատարակումը, իսկ այնուհետև գիտական քննարկումները մեծապես նպաստեցին Սովետական Հայաստանի պատմության ստեղծմանը։

Ամսագրում բիչ նյութեր չեն հրատարակվել Հայաստանի կոմկուսի բուն գործունեության, նրա գլխավորած պայքարի պատմության մասին՝ առանձին ժամանակաշրջաններում։ Գիտական հատուկ ուսումնասիրության նյութ են դարձել նրա գործունեությունը հանրապետության առանձին տնտեսական շրջանների արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման, հանրապետության ինդուստրացման, տեխնիկական առաջադիմության, սոցիալիստական մրցության ծավալման, կադրերի դաստիարակության ու պատրաստման, սովետահայ մտավորականության հոծ բանակի ստեղծման, ժողովուրդների բարեկամության ամրապնդման, կուսակցության միասնության ու նրա գծի պաշտպանության ուղղությամբ։ Հայաստանի կոմկուսակցության փաստաթղթերը ամսագրի էջերում լայն մեկնաբանություն ստանալով, գիտական շրջանառության մեջ են դրվել, նպաստել գիտա-հետազոտական աշխատանքների մակարդակի բարձրացմանը։

«Տեղեկագրի» («Վրաբեր») էջերում պատշաճ տեղ են դրավել աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակությունը, ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը նվիրված ուսումնասիրությունները։ Նրա մշտական բաժիններից մեկն էր «Եղբայրական հանրապետություններում» բաժինը, որտեղ պարբերաբար նյութեր էին հրատարակվում Վրաստանի և Ադրբեջանի գիտական հաստատություններում կատարվող գիտա-հետազոտական աշխատանքների, նրանց գործունեության, ռուս մեծ ժողովրդի, ադրբեջանցի և հայ ժողովուրդների հեղափոխական պայքարի, սոցիալիստական շինարարության ասպարեզում ձեռք բերած նվաճումների մասին։ Մասնավորապես ամսագրի էջերում ուսումնասիրություններ են զետեղվել հայ ժողովրդին մյուս ժողովուրդների ցույց տված եղբայրական օգնության մասին, նրանց համատեղ մղած պայքարի, սոցիալիստական ազգերի կազմավորման, տնտեսական, քաղաքական ու մշակութային համագործակցության, Արևելյան Հայաստանն Ռուսաստանին միանալու պատմական նշանակության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի մասին։ Բազմաթիվ նյութեր են զետեղվել Անդրֆեդերացիայի Սովետական Ռուսաստանի, հայ-ուկրաինական կապերի, Բելոռուսիայի, Ադրբեջանի ու Վրաստանի մասին, ինչպես նաև մյուս ժողովուրդների, մասնավորապես ռուս մեծ ժողովրդի հետ հայ ժողովրդի ունեցած պատմական կապերի մասին։ Մի շարք նյութերում վեր են հանվել ժողովուրդների բարեկամության ամրապնդման ուղղությամբ կուսակցության մղած պայքարը և գիտաշխա-

ս.ողների ուշադրությունը սրվել է այդ թեմատիկայի բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտության վրա։

Պարբերաբար հրատարակվող նյութերով ամսագիրը մշտապես պայքարել է բուրժուական գաղափարախոսության դեմ, մերկացրել է մարքսիզմ-լենինիզմի տեսությանը հակոտնյա հին ու նոր գաղափարախոսությունները, դաշնակցության հակահեղափոխական գործունեությունը, պայքարել է թշնամական իդեոլոգիայի դրսևորումների դեմ։

Սկզբից ի վեր ամսագրում պատմագիտական թեմաները բնականաբար մեծ տեղ են գրավել։ Այդ թեմայով հրատարակված հոդվածներն ու հաղորդումներն ընդգրկում են հայ ժողովրդի անցած բազմադարյան ուղու հանգուցային հարցերը՝ լուսաբանված մարքսիստական-լենինյան տեսության ոգով, նոր փաստերի հիման վրա ու նոր մոտեցումով։ Այս գործում մեծ լումա են ներդրել հատկապես երիտասարդ պատմաբանները, որոնք իրենց առաջին հետազոտությունները հրատարակել են «Տեղեկագրում» և որոնցից շատերն այսօր անվանի գիտնականներ են։

Կենտրոնական տեղը պատմագիտական թեմաների շարքում պատկանում է ազատագրական պայքարի հարցերին, նրա առանձին էտապներին նվիրված նյութերին, հայ հասարակական մտքի զարգացումը լուսաբանող հոդվածներին ու ուսումնասիրություններին։ Որպես կանոն հրատարակելով նոր նյութերի հիման վրա գրված միայն նոր հետազոտություններն, ամսագիրը մեծապես նպաստել է այն բանին, որ տարեցտարի ավելի խորացվի ու բազմակողմանի գարձվի հայ ժողովրդի պատմության հանգուցային հարցերի մարքսիստական ուսումնասիրությունը։

Ամսագիրը բազմիցս անդրադարձել է հայկական հարցին՝ լուսաբանելով տարբեր տեսանկյունից, գյուղացիական ապստամբություններին, արևմտահայ ազատագրական շարժումներին, Զեյթունի 1862 թ. և Սասունի 1894 թ. ապստամբություններին, պավլիկյան և թոնդրակեցիների շարժումների գաղափարախոսությանը, 451 թ. ապստամբությանը, արևստահայության մասնակցության հարցերին բռնակալական, ֆեոդալական-ճորտատիրական լուծը տապալելու համար, հատկապես թուրքական դեսպոտիզմի դեմ ծավալված պայքարին։ Մասնավորապես զգալի տեղ է հատկացվել հայկական գյուղում ծավալված դասակարգային պայքարին, գյուղացիական ռեֆորմներին, ինչպես և աշակերտական-երիտասարդական շարժումներին։ Ըստ որում, ազատագրական բուն պայքարի էջերը լուսաբանելուն զուգընթաց ամսագրում արծարծվել են նաև հասարակական հոսանքների պատմությունը, քաղաքական ուղղությունները։

Հատուկ ուշադրություն է դարձվել պատմագիտության հանգուցային հարցերին։ Ամսագրի էջերում քննարկվել են հայ ժողովրդի պատմության պարբերացման հարցերը, Հայաստանի հասարակական կառուցվածքի հիմնական առանձնահատկությունները՝ տարբեր էպոխաներում, նրա պատմության առանձին շրջանների ուսումնասիրության խնդիրները, հայ հասարակական մտքի հիմնական ուղղությունները՝ զուգահեռաբար հրատարակելով այն նորագույն կոնկրետ հետազոտությունները, որոնք նպաստում էին արծարծվող այդ հարցերի լուծմանը։ Առանձին ուսումնասիրություններում ի մի են բերվել սովետահայ պատմագրության նվաճումները, խմբագրականներ են նվիրվել պատմագրության հրատապ խնդիրներին, հրատարակվել են հայ ժողովրդի պատմության որոշ հատվածները։

Արտացոլելով հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության ընդլայնման ու խորացման պրոցեսը, ամսագիրը մեծ թվով նյութեր է հրատարակել Հայաստանի և հայաշատ առանձին օջախների, շրջանների, գավառների ու տեղավայրերի պատմության վերաբերյալ (Վասպուրական, Զորք-Կապան, Գյանջա, Շուլավեր, Երևանի նահանգ, Սյունիք, էջմիածին, Ալեքսանդրեռի սանջակ, Վան քաղաք, Շուշի, Երզնկա և այլն)։ Այդ իմաստով ակնառու է այն հսկայական ուշադրությունը, որ դրսևորվել է դեպի հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրությունը և որն իր արտացոլումն է գտել նաև ամսագրում։ Նրա տարեգրքերում բազմաթիվ հետազոտություններ կարելի է գտնել նվիրված Աստրախանի, Ն. Նախիջևանի, Ստանիսլավի, Զոլոչևի, Ղրիմի, Լվովի, Բուլղարիայի, Գրիգորիոպոլի, Նոր Ջուղայի, Լեհաստանի ու Մոլդավիայի, Բեսարաբիայի ու Բուլղարիայի և ուրիշ վայրերի հայկական գաղութների պատմությանը, մշակութային կյանքին, հասարակական կացությանը և այլ հարցերին։

Հայ ժողովրդի պատմության հանգամանալից ուսումնասիրության գործում կարևոր տեղ ու նշանակություն են ունեցել մեր պատմաբանների, պատմական անձնավորությունների, ժողովրդի պատմության մեջ դեր խաղացած գործիչների, հասարակական հոսանքների ներկայացուցիչների կյանքի ու գործունեության գնահատությանը նվիրված նյութերը, նրանց ժառանգության վերհանումը, վերաարժեքավորումը, նրանց հետ առնչվող հարցերի պարզաբանումն ու ճշգրտումը «Տեղեկագրի» («Վրաբեր») էջերում։

Հայ պատմական-ականավոր գործիչների հոբելյաններից զատ, երբ առանձին նյութեր, նույնիսկ ամբողջական համարներ են նվիրվել (օրինակ՝ Մ. Նալբանդյանին, Մ. Մաշտոցին), ամսագիրը նրանց անդրադարձել է պարբերաբար՝ ամեն անգամ նոր լույս սփռելով այս կամ այն գործչի գործունեությանն առնչվող որևէ հարցի վրա։ Դեռևս իր անդրանիկ համարում «Տեղեկագիրը» զետեղելով Մովսես Խորենացուն նվիրված Ստ. Սալխասյանի դասախոսությունը, հետագայում տեղ է տվել նաև Ն. Տեր-Մինասյանի ու Ստ. Մալխասյանի և Լ. Մելիքսեթ-Բեկի ու դարձյալ Ստ. Մալխասյանի դիալոգներին, ապա և Մովսես Խորենացու «Հայոց պատմությանն» առնչվող հարցերին անդրադարձել հետագա տարիներին (1941, 1943, 1956, 1958 թթ.)։

Առավել հետևողականորեն է ամսագիրն անդրադարձել Միքայել Նալբանդյանի կյանքին ու գործունեությանը, նրա հարուստ ժառանգության ուսումնասիրությանը, հայացքների մեկնաբանությանը։ 1940 թ. № 1—2-ում Միքայել Նալբանդյանին նվիրված երկու ուսումնասիրություններով փաստորեն սկսել է այն նշանակալից ներդրումը, որ վիճակված էր կատարելու «Տեղեկագրին» («Լրարեր») Նալբանդյանագիտության ասպարեզում։ Սովետահայ պատմաբանների ու գրականագետների այն նյութերը, որոնք հրատարակվել են ամսագրում, նվիրվել են Նալբանդյանի պոեմներին, մատերիալիստական-փիլիսոփայական հայացքներին, նրա առանձին երկերին, բնագրատական աշխարհայեցությանը, ծավալած ազատագրական պայքարին, կյանքին ու գործունեությանը, ինչպես նաև երկերի հասարակական արձագանքներին, անհայտ երկերին, նրա շուրջը մղված պոլեմիկային, նշանավոր աշխատություններին, նրա զինակիցներին, Նալբանդյանին վերաբերող նորահայտ նյութերին և այլն։

Հայ ժողովրդի պատմության հարցերը լուսաբանելուն զուգընթաց ամսագիրը նկատելի տեղ է հատկացրել նաև այն պատմական առնչակցություններին, որ նա ունեցել է հարևան ժողովուրդների ու երկրների հետ։ Մասնավորապես նա զգալի դեր է կատարել արևելագիտական ընդհանուր և մասնավոր հարցերին նվիրված սովետահայ պատմաբանների ուսումնասիրությունները հրատարակելու գործում, բացի դրանից անդրադարձել է արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարին, մարքսիստական-լենինյան տեսության լույսի տակ արծարծել է Թուրքիայի, Իրանի, Սիրիայի, Եգիպտոսի և արաբական այլ երկրների պատմության մի շարք հարցերը։ Մանավանդ այդ երկրների և Հայաստանի պատմական առնչակցությունները, գիտական քննադատություն է ծավալել առանձին հարցերի խեղաթյուրումների դեմ՝ բուրժուական պատմաբանների երկերում։ Ամսագիրը հաճախ է անդրադարձել Թուրքական բռնատիրության դեմ հայ ժողովրդի մղած դարավոր պայքարին, մերկացրել է Թուրք ցեղասպանների ոճրագործ քաղաքականությունը հայության դեմ, սուլթանական Թուրքիայի զավթողական գործողությունները հարևան ժողովուրդների, մասնավորապես անդրկովկասյան ժողովուրդների նկատմամբ։

Պարսից դրականության սկզբնավորման ու զարգացման ուղու, Թուրքիայի պատմության առանձին էտապների, անդյո-ամերիկյան գաղութարարների Մերձավոր Արևելքի երկրներում վարած քաղաքականության, այդ երկրների պատմության մի շարք հարցերի, մասնավորապես ազգային-ազատագրական շարժումների մասին բազմաթիվ հոդվածները, որոնց հեղինակները գերազանցապես սովետահայ արևելագետներն են, նկատելի տեղ են գրավել ամսագրի էջերում և նպաստել են շոշափվող հարցերի դիտական լուսաբանմանը։

Իր հրատարակած հոդվածներով և բազմաթիվ նյութերով «Տեղեկագիրը» («Լրարեր») օգնել է արևելագիտական հիմնական ուղղությունների և մասնավորապես քրդագիտության զարգացմանը Սովետական Հայաստանում, լուսաբանել է ոչ միայն ՀՍՍՀ-ում բնակվող քրդերի, այլև առհասարակ բուրդ ժողովրդի պատմության շատ հարցեր։

Ինչպես պատմագիտության հարցերը լուսաբանելիս, այնպես էլ հայագիտության տարբեր բնագավառներում կատարվող գիտա-հետազոտական աշխատանքները հրատարակելիս ամսագիրը պասիվ դերում չի գտնվել, չի բավարարվել լոկ այս կամ այն ուսումնասիրությունը լույս ընծայելով, նույնիսկ միևնույն թեմային նորից ու նորից անդրադառնալով։ Ամսագրի խմբագրությունը կազմակերպել է մտքերի փոխանակություն, հաճախ հրատարակել է գիտնականների նամակները, ճշգրտումներ է կատարել զանազան հարցերում, ամփոփել է մտքերի փոխանակությունը։ Ամսագրի 1951 թ. 8-րդ համարում բացված դիսկուսիան՝ հայ ժողովրդի ֆեոդալական շրջանի պատմության պարբերացման հարցերի շուրջը և 1955 թ. № 12-ում սկսված X—XIV դդ. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի մասին մտքերի փոխանակությունը լայն արձագանք է գտել ու հետաքրքրություն առաջացրել գիտնականների շրջանում։ Դիսկուսիայի և մտքերի փոխանակության ընթացքում հրատարակված նյութերն, անշուշտ, նպաստել են արծարծվող հարցերի պարզաբանմանը, խթանել են պատմագիտական մտքի աշխուժացմանն ու զարգացմանը։

Այն գիտությունների թվում, որոնք ներկայացվել են ամսագրի առաջին համարներում, իր տեղն ուներ նաև հնագիտությունը։ Դա պայմանավորել է այն հանգամանքը, որ յուրաքանչյուր տարի նրանում ամփոփվել են հնագիտական պեղումների արդյունքները, զետեղվել նորագույն հետազոտությունները՝ ի սկզբանե հարկավոր պատկերազարդումներով, գծագրերով, լուսանկարներով։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումից հետո, հնագիտական աշխատանքների ծավալման զուգընթաց, ամսագրում բնականաբար ավելի ու ավելի մեծ տեղ են գրավել հայ ժողովրդի նյութական մշակույթին, կատարվող պեղումներին և նոր հայտնագործություններին նվիրված նյութերը, որոնցով հանդես էին գալիս ոչ միայն երիտասարդ, այլ նաև հայտնի հնագետները։ Վերջին քսան տարում ամսագրում հրատարակվել են շուրջ 150 ուսումնասիրություններ հնագիտական և ազգագրական թեմաներով։ Դրանք հայտնի չափով ուրվագծում են այն հիմնական ուղին, որ անցել է հասարակական գիտության այդ բնագավառը մեր հանրապետությունում։ Նրանց թվում դգալի տեղ են գրավում հնագիտական պեղումների արդյունքներին նվիրված նյութերը, նորահայտ արձանագրությունների մեկնաբանությունները։

Բավականաչափ հարուստ է այն տեղավայրերի քարտեզը, որտեղ կատարված հնագիտական աշխատանքների կամ դրանց շրջանում հայտնաբերված նյութերի մասին ուսումնասիրություններ են հրատարակվել «Տեղեկագրում» («Լրաբեր»). Թեյշեբաինի, Արինբերդ, Դվին, Սևանի լիճ և ավազան (ներառյալ նաև Գեղամա լեռներ), Լենինական, Գառնի, Բշնի, Կիրովական, Լճաշեն, Նոր-Արեշ, Մրեն, Աղավնաձոր, Վարդաքար, Իշևան, Սիսավան, Դիլիջան, Հացավան, Նոր Բայազետ, Պեմզաշեն, Շամշադին, Տաշիր-Ջորագետ, Շիրակ, Ջովունի, Ջավարի, Ջավախք, Աստղաբլուր, Նոյեմբերյան և այլն։ Ամսագիրը բազմիցս անդրադարձել է ուրարտագիտության հարցերին, ուրարտական մշակույթին, տեղ է տվել հին և միջնադարյան պատմական հուշարձաններին՝ Դվինի կաթողիկե եկեղեցուն, Էջմիածնի տաճարին, Զվարթնոցին, Սիսավանի պատկերաքանդակներին, Մեղրու բերդին, Ավանի մայր տաճարին նվիրված նյութերին, Լոռ, Արագած գյուղերում և ծամաքարերդում կատարված հնագիտական աշխատանքներին։ Նրա էջերում արծարծվել են Զվարթնոցի վերակազմության հարցերը։ Առանձնակի ուշադրություն է դարձվել Երևան-Էրեբունի հնադարյան պատմությանը, ինչպես և պալեոլիթային շրջանի ուսումնասիրությանը։ Հաճախակի ուսումնասիրություններ են լույս տեսել ազգագրական թեմատիկայով՝ հայ ժողովրդի կենցաղի, սովորույթների, հավատալիքների, արտադրական գործունեության, տարազի, հնագույն արվեստի շուրջը։

Հնագիտական նյութերի շարքում առանձնահատուկ տեղ են գրավում այն ուսումնասիրությունները ու հրապարակումները, որոնցում վեր են հանվել հայ ժողովրդի հոգևոր դանձերը, հին ձեռագրերը, զանազան հիշատակություններն ու արձանագրությունները։ Այդ նյութերի շնորհիվ դիտական հիմնավորում են ստացել հայագիտական շատ հարցեր, գիտական շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ հետաքրքրական նյութեր, վեր են հանվել շատ նոր փաստեր, վկայություններ։ Դրանք մեծ մասամբ ուղեկցվել են պատկերազարդումներով, որի շնորհիվ զարեր շարունակ դրապահոցներում պարփակված տասնյակ մանրանկարներ, զարդանախշեր, գլխագրեր բազմացվելով մատչելի են դարձել հետազոտողներին, դադարել են «մեռյալ գանձ» լինելուց։

40—50-ական թվականներին՝ գրեթե երկու տասնամյակ «Տեղեկագիրը» եղել է հայերեն լեզվով լույս տեսնող հասարակական գիտությունների միակ պարբերականը։ Այդ հանգամանքը պայմանավորել է նրա բովանդակությունը՝ ոչ միայն գիտությունների ակադեմիայի սիստեմում, այլև ամբողջ հանրապետությունում կատարվող գիտական ուսումնասիրությունները հրատարակելու իմաստով։ Դա առավել մեծ չափով վերաբերում է տնտեսագիտական թեմատիկային, որն ամսագրում զգալի տեղ է գրավում առ այսօր։ Բնորոշն այդ թեմատիկայում հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման խնդիրներին նվիրված ուսումնասիրություններն են և գյուղատնտեսության ու արդյունաբերության ասպարեզում ձեռք բերված նվաճումների գիտական ընդհանրացումը։ Ամսագրի հրատարակած տասնյակ նյութերը նվիրված են կոնկրետ էկոնոմիկային, ժողովրդական տնտեսության այս կամ այն բնագավառի հրատապ խնդիրներին։ Հողատարածությունների յուրացում, հնգամյակի տարիների տնտեսագիտական խնդիրներ, ոռոգման սիստեմ, առանձին տնտեսական շրջանների գիտական բնութագրություններ (Դարալագյազ, Արարատյան դաշտավայր, Զանգեզուր, Երևան քաղաք, Սևանի ավազան և այլն), մեքենա-տրակտորային կայաններ, ներգործարանային տնտեսություն, հիմնական ֆոնդեր, կոլտնտեսային արտադրություն, տրանսպորտ և երկաթուղային տնտեսություն, արտադրական կարողությունների օգտագործում, մետաղամշակություն, էլեկտրատնտեսություն, արտադրության միջոցների արտադրություն, արհեստագործական կոոպերացիա, մեքենաշինություն, հաստոցաշինություն, հիմնական

ֆոնդերի բարոյական մաշվածություն, կապիտալ ներդրումների տեսական հարցեր, ընդլայնված վերարտադրություն, գյուղատնտեսական աշխատանքների և արտադրական պրոցեսների մեքենայացում, աշխատանքի վարձատրություն և արտադրողականություն, ինքնարժեք, սովխոզային տնտեսություն, պտղաբուծություն և խաղողագործություն, շինարարական արդյունաբերություն, հողագործությունում, աշխատանքի էներգոդիմնվածություն, աշխատանքային ռեսուրսներ և բանվորական ուժ, արտադրողականության բարձրացում, տեխնիկական առաջադիմություն, կադրերի պատրաստում, նյութական շահագրգռվածություն, տնտեսական ռեֆորմ,— ահա այն տնտեսագիտական պրոբլեմների ոչ լրիվ ցանկը, որոնք արծարծվել են ամսագրում զետեղված նյութերում։ Դրանց մեծ մասում գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ են տրվում կամ էլ ամփոփվում են տվյալ ընդավառի տնտեսական նվաճումները և արվում գիտական ընդհանրացումներ։

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել գյուղատնտեսության էկոնոմիկային, որին նվիրված նյութերն աչքի են ընկնում թե՛ իրենց բաղմաղանությամբ և թե՛ նպատակասլացությամբ։ Սոցիալիստական գյուղատնտեսության տնտեսագիտական հարցերի մասին որոշակի գաղափար են տալիս թեկուզ ուսումնասիրություններից մի քանիսը. «Կոլտնտեսություններում սոցիալիստական ընդլայնված վերարտադրության մասին» (1956, № 7), «Կոլտնտեսություններում աշխատանքի վարձատրման մի քանի հարցերի մասին» (1958, № 2), «Կոլտնտեսային արտադրանքի ինքնարժեքը հաշվարկելու մասին» (1959, № 3), «Աշխատանքի հաշվառման և վարձատրման նոր ձևերը կոլտնտեսություններում» (1959, № 4), «Հյուսիս-արևելյան Հայաստանի սովխոզների արտադրական գործունեության հիմնական ցուցանիշները» (1959, № 9), «Արարատյան դաշտավայրի կոլտնտեսությունների էկոնոմիկայի և գյուղատնտեսության մասնագիտացման զարգացման մի քանի խնդիրներ» (1959, № 10), «Պտղա-այգեգործական սովխոզների զարգացման հեռանկարները» (1960, № 1), «Հողային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման մի քանի հարցեր» (1961, № 8), «Աշխատանքային ռեսուրսների և բանվորական ուժի վերարտադրության մի քանի հարցերը Հայաստանի գյուղատնտեսության մեջ» (1961, № 11), «Գյուղատնտեսական հումքի արդյունաբերական արտադրանքի աճման ուղիները» (1967, № 12), «Նյութական շահագրգռվածության բարձրացումը գյուղատնտեսական արտադրության մեջ» (1968, № 9) և այլն։

Կոնկրետ էկոնոմիկայի հարցերին զուգընթաց ամսագրում լուրջ տեղ են գրավել նաև հայ անտեսագիտության պատմությունը, նրա տեսական հարցերը, հայ տնտեսագիտական մտքի զարգացումը։ Լուսաբանվել են Հայաստանում կապիտալիզմի ընդհանուր ընթացքը և նրա հակասությունները ու առանձնահատկությունները, հայկական գյուղի սոցիալ-տնտեսական փոխհարաբերությունները, ասեստրի և այլ հարցեր։ Ըստ որում, ամսագրի էջերում 1955 թ. բացվել է մտքերի փոխանակություն Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերի շուրջը, որին մասնակցել են նաև շատ տնտեսագետներ։

Իր հիմնական նպատակադրումը համարելով սոցիալիստական շինարարության տնտեսագիտական խնդիրների լուսաբանումը, վերջին տարիներին «Լրաբերն» ուշադրության կենտրոնում է պահում նոր տնտեսական ռեֆորմի իրագործումը, արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ նոր մեթոդների կիրառման խնդիրները, մասնավորապես գիտականորեն հիմնավորված պլանավորման հարցերը։ Այդ թեմատիկայով հրատարակված մի շարք հոդվածներում ընդհանրացվել է հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների և կոլտնտեսությունների գործունեությունն ու փորձը, գործնական առաջարկություններ են արվել այդ ասպարեզներում տնտեսական օրգանների գործունեությունը բարելավելու մասին։

Հայոց լեզվի, ինչպես և ընդհանուր լեզվաբանական հարցերի ուսումնասիրության ուղղությամբ սովետահայ լեզվաբանները մեծ նվաճումներ են ձեռք բերել։ Այդ նվաճումները հայտնի չափով իրենց արտացոլումն են գտել նաև այն ուսումնասիրություններում, որոնք հրատարակվել են ամսագրի երեսուն տարվա համարներում։ Այդ նյութերին բնորոշը հայոց լեզվի, նրա քերականական կառուցվածքի ուսումնասիրության հետագա խորացումն է, որն ընթացել է ինչպես ընդհանուր լեզվաբանության, այնպես էլ հայ ականավոր լեզվաբանների ու քերականագետների ստեղծած ամուր հիմքի վրա՝ մարքսիստական մեթոդոլոգիայի կիրառմամբ։

Ամսագիրն առավելագույն ուշադրություն է դարձրել ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրությանը։ Գրական հայերենին նվիրված հոդվածներում հատկապես ընդհանրացվել է նրա զարգացման ուղին սովետական տարիներին, արծարծվել են բառապաշարի և քերականության հարցերը, ուսումնասիրվել են խոսքի մասերը, շարահյուսական կառուցվածքը։ Հատուկ տեղ է տրվել տերմինաբանության խնդիրներին՝ թե՛ առանձին ընդավառների (աստղագիտական, լեզվաբանական, տնտեսագիտական և այլն) և թե՛ ընդհանուր տերմինալոգիայի առումով։ Տասնյակ հոդ-

վածներ են նվիրվել լեզվական երևույթներին. նախադասության կառուցվածքի հարցերին, շարահյուսությանն ու ոճաբանությանը, հնչյունական համակարգին, մասնավորապես խոսքի մասերին. նախադասության անդամներին ու տեսակներին։

Արդի հայերենի գիտական ուսումնասիրության ընթացքն արտացոլելու հետ մեկտեղ ամսագիրը տեղ է տվել հին հայերենին՝ գրաբարին նվիրված հետազոտություններին։ Նրա կազմավորումը, հոլովական սիստեմը, փոխհարաբերությունը գրական հայերենի հետ ուսումնասիրվել են ամսագրի էջերում տեղ գտած շատ հոդվածներում։

Սովետական տարիներին բուռն զարգացում ապրած և լայն ծավալ ստացած բարբառագիտությունն ամսագրում սկսվել է լուսաբանվել առանձին գրողների երկերում բարբառային երևույթների դրսևորումների քննարկումներով։ Բարբառների ուսումնասիրման մեթոդական հարցերին. դասակարգման սկզբունքներին, նրանց զարգացման ներքին օրինաչափություններին նվիրված ելակետային մի քանի հոդվածներից հետո ամսագիրը հրատարակել է առանձին բարբառների ու ենթաբարբառների քննությանը նվիրված բազմաթիվ նյութեր. Մշո, Կեսարիայի. Թիֆլիսի. Կրոզեների, Կարճևանի, Կաքավաբերդի, Մալաթիայի, Սվեդիայի, Բուրդուրի, Արարատյան, Ոզմի, պոլսահայ, Ղարաբաղի, Արզվինի, Քանաքեռի բարբառներին նվիրված ուսումնասիրությունները՝ բարբառագիտության ընդհանուր խնդիրներն արծարծող հոդվածների հետ միասին նպաստել են լեզվաբանության այդ կարևոր ասպարեզի դիտական լուսաբանմանը։

Ամսագրի էջերում հրատարակված շատ հոդվածներում քննարկվել են հայոց լեզվի ազգակցության հարցերը և նրա կրած ազդեցությունները մյուս լեզուներից (կովկասյան լեզուներ. ռուսերեն, գերմաներեն, պարսկերեն, արաբերեն, պեղագերեն, հին մակեդոներեն, խեթերեն և այլն), մասնավորապես բացահայտվել ու ստուգաբանվել են հայերենի հնդևրոպական բազմաթիվ արմատները։ Մի շարք նյութերում ամսագիրն անդրադարձել է բառարանագրության հարցերին. ներկայացրել մեր բառարանագրության հարուստ գանձերը, ինչպես նաև ականավոր լեզվաբանների (Ն. Մառ, Մ. Աբեղյան, Հ. Աճառյան, Պ. Հովնանյան և այլն) լեզվագիտական ժառանգությունը, վերլուծել գրողների ստեղծագործությունների լեզուն կամ նրանց լեզվագիտական հայացքները (Խ. Աբովյան, Հր. Քոչար, Գ. Սունդուկյան, Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Սայաթ-Նովա, Ս. Չարենց, Հ. Շիրազ, Պ. Սևակ)։ Մի շարք դեպքերում խմբագրությունը հոդվածները տպագրել է մտքերի փոխանակության կարգով, հրավիրելով լեզվաբաններին հանգես գալու արծարծվող հարցերի շուրջը, երբեմն տեղ է տվել այն հոդվածներին, որոնց մեջ քննադատվել են ամսագրում զետեղված այս կամ այն հոդվածի սխալ դրույթները, թույլ տված անճշտությունները լեզվի հարցերում։

Ամսագիրը իր զետեղած նյութերով երբեմն որոշակիորեն միջամտել է լեզվական առանձին հարցերի գործնական լուծմանը (օրինակ «Բառային փոխառությունների և լեզվի մաքրության մասին», «Վերականգնել լենինյան նորմաները լեզվի հարցերում», տերմինաբանական հարցերին նվիրված նյութերը և այլ հոդվածներ)։

Լեզվաբանության հարցերի լուսաբանումը, բնականաբար, ուղեկցվել է լեզվի պատմության, նրա առանձին հարցերին նվիրված նյութերի, ինչպես նաև սովետահայ լեզվաբանության անցած ուղին ամփոփող հոդվածների հրատարակությամբ («Հայ լեզվաբանությունը քսանհինգ տարում»՝ 1946, № 1, «Հայերեն գրական լեզվի զարդացումը սովետական իշխանության տարիներին»՝ 1947. № 2)։

Ամսագրի հիմնադրումը գրեթե զուգադիպեց հայ գրականագիտական մտքի մարքսիստական-լենինյան ձևավորումն ավարտվելու և ամրապնդվելու հետ։ Գրականության նոր ըմբռնումն ու մեկնաբանությունը, գրականագիտական հարցերը մարքսիզմ-լենինիզմի տեսության ոգով լուսաբանելը կարևոր այն նվաճումն էր, որ ձեռք էին բերել հայ գրականագետները համատեղ ջանքերով։ Նոր փաստերի հայտնաբերում ու մեկնաբանում, դասական գրողների ստեղծագործությունների վերլուծություն նոր տեսանկյունից, գրական հուշարձանների առավել խոր ուսումնասիրում, անցյալի գրավոր ժառանգության վերագնահատում ու արժեքավորում, գրաքննադատական առավել հանգամանալից քննություն,— սովետահայ գրականագիտության այդ ուղին իր լիամփոփ արտացոլումն է գտել հենց «Տեղեկագրի» («Հրաբեր») էջերում։

Ամսագրի գրականագիտական նյութերի հաշվեկշռում առավելապես մեծ տեղ են գրավում գրողների ժառանգությանը, նրանց կյանքի ու ստեղծագործական ուղու վերհանմանը, նրանց առանձին երկերի վերլուծությանը նվիրված նյութերը։ Քիչ գրողներ կարելի է գտնել, որոնց ստեղծագործություններին այս կամ այն չափով անդրադարձած չլինի ամսագիրը. առանձին ուսումնասիրություններ են հրատարակվել հայ գրականության զարգացման ամբողջ ընթացքը նշանավորող շուրջ ութ տասնյակ գրողների մասին։ Գրականագիտական նյութերի շարքում, ինչպես

պետք էր սպասել, պատշաճ տեղ են գրավում սովետահայ գրողներին և նրանց ստեղծագործություններին նվիրված ուսումնասիրությունները։

Դրականագիտական հրատապ թեմատիկայի լուսաբանումը միշտ էլ գտնվել է ամսագրի ուշադրության կենտրոնում։ Նա ձգտել է իր էջերում արտացոլել ժամանակի առաջադրած պրոբլեմները, համընթաց է թայլել այն խնդիրների հետ, որոնցով զբաղվել է սովետահայ գրականագիտական միտքը, թեև այդ Հանապարհին նա էլ երբեմն-երբեմն շեղվել է դիտական ճիշտ ուղուց, անխուսափելիորեն տուրք է տվել այն հախուռն, նիհիլիստական տենդենցներին, որ դրսևորվել են անհատի պաշտամունքի տիրապետության տարիներին։

Մի շարք նյութերով ամսագիրը վերլուծել է մարքսիստ գրականագետների հայացքները, պարզաբանել գրականության կուսակցականության սկզբունքները, մեկնաբանել պրոլետարական գրականության առաջամարտիկների ստեղծագործությունները։

Ամսագրի տտրեդրքերը պատկերացում են տալիս նաև սովետահայ բանահյուսության անցած ուղու մասին։ Առանձին ուսումնասիրություններ են նվիրվել Վ. Ի. Լենինի կերպարի արտացոլումներ հայ ժողովրդական բանահյուսության մեջ, շատ հոդվածներում վեր է լուծվել հայ բանահյուսության ղլուխ գործոցը՝ Լպոսը։ Հատուկ ուշադրություն է դարձվել ժողովուրդների բարեկամության թեմատիկայի արտացոլմանը գրական ստեղծագործություններում («Ժողովուրդների բարեկամության մեծ դրոշակակիրը» (Ախունդով)՝ 1953, № 3, «ՍՍՀՍ ժողովուրդների բարեկամության արտացոլումը սովետահայ գրականության մեջ (1920—1940 թթ.)»՝ 1957, № 11, «Ժողովուրդների բարեկամության երգիչը» (Ջիվանի)՝ 1959, № 8, «Ժողովուրդների եղբայրության դաղափարը Ա. Բակունցի ստեղծագործություններում»՝ 1961, № 5 և այլն)։ Ամսագրում տպագրված գրականագիտական նյութերի շարքում իրենց ուրույն տեղն ունեն բանասիրական պրպտումներ ու ճշգրտումներ, նորահայտ կամ անհայտ երկեր խորագրերի տակ լույս տեսած հոդվածները, ինչպես նաև դանազան առիթներով հրատարակված այլևայլ նամակները։

Սկսած ամսագրի գրեթե անդրանիկ համարներից, նրա էջերում լույս էին տեսնում փիլիսոփայական ուսումնասիրություններ։ Դրանց շարքում կարևոր տեղ են գրավում մարքսիստական փիլիսոփայության զանազան հարցերին նվիրված հոդվածները։ Մարքսիստական դիալեկտիկային, մարքս-լենինյան փիլիսոփայությանը, հասարակության կյանքում փիլիսոփայության դերին, դիալեկտիկական մատերիալիզմի օրենքներին, ճանաչողության թեորիային ու էսթետիկայի հարցերին ամսագրում բազմաթիվ ուսումնասիրություններ են նվիրվել։ Մի շարք նյութերում վեր են լուծվել Վ. Ի. Լենինի փիլիսոփայական հայացքները։ Փիլիսոփաները հանգես են եկել զարգացման մասին վոլյունտարիստական տեսության ռեակցիոն էության, անգլո-ամերիկյան պրագմատիստների, սեմանտիկյան իդեալիզմի, ժամանակակից ռևիզիոնիզմի դրսևորումների, արդի մալթուսականության ու «ֆիզիկական իդեալիզմի», ագնոստիցիզմի, նեոկանտականության և բուրժուական սոցիոլոգիայի քննադատությամբ։ Նյութեր են նվիրվել լեզվի ու մտածողության, հասարակական երևույթների դիալեկտիկական ըմբռնման հարցերին, ռուս փիլիսոփաներին։

Ամսագրի փիլիսոփայական նյութերի թեմատիկայում ծանրակշիռ մաս են կազմում հայ փիլիսոփայությանը նվիրված հոդվածները։ Առանձին ուսումնասիրություններ են հրատարակվել Դավիթ Անհաղթի ուսմունքի, Արիստոտելի տրամաբանության հին հայկական մեկնաբանության, Ս. Սպանդարյանի, Ն. Զարենցի, Գ. Կոստանդյանի, Գրիգոր Տաթևացու, Ա. Գարագաշյանի, Մ. Մամուրյանի, Անանիա Շիրակացու, Գ. Արծրունու, Անդրեաս Փոփովիչի, Պ. Մելիքշահյանի (Ֆիդիկա Պողոս), Մ. Թադիադյանի, Ա. Բաղրատունու, Խ. Աբովյանի, Ն. Ռուսինյանի և այլ մտածողների փիլիսոփայական հայացքների և իմաստասիրական տեսությունների վերլուծության ու գնահատության շուրջը։ Որոշ հոդվածներում քննարկվել են Սիլվեն Մարեշալի, Գիդրոյի, Լաֆարգի, Կանտի, Արիստոտելի, Հոլբախի, Ֆոյերբախի, Դեկարդի, Դիցդենի հայացքները փիլիսոփայական այս կամ այն հարցի շուրջը։

Մեծ ուշադրություն է ամսագիրը դարձրել հայկական վերածննդի հարցերին։ 1955 թ. № 12-ում տպագրելով Վ. Ջալոյանի «Հայկական վերածննդի մասին» ընդարձակ հոդվածը, խմբագրությունը հատուկ ծանուցումով խնդրել է փիլիսոփաներին, հայ հասարակական մտքի ու մշակույթի պատմությամբ զբաղվող գիտնականներին հանդես դալ նրանում արծարծվող հարցերի շուրջը։ Հետագա մի շարք համարներում ամսագիրը բազմաթիվ նյութեր է հրատարակել այդ խնդրի մասին և 1958 թ. № 11-ում ամփոփել է դիսկուսիայի արդյունքները, հանդես եկել խմբագրական հատուկ հոդվածով։ Ի դեպ, մտքերի փոխանակության կարգով հոդվածներ են զետեղվել նաև բազիսի և վերնաշենքի, դիալեկտիկայի օրենքի լեզվի զարգացման ասպարեզում դրսևորվելու յուրահատկությունների շուրջը։ Դրանով ամսագիրը նպաստել է արծարծվող հարցերի գիտական լուծմանը, թեև երբեմն նաև վրիպել է։

Հատուկ պետք է նշել նաև այն թեմաները, որոնցում արծարծվել են կոմունիստական շինարարության, սոցիալիստական հասարակության զարգացման առաջադրած խնդիրները՝ «Մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած հակադրության առանձնահատկությունների համառոտ վերլուծություն», «Մտավոր և ֆիզիկական աշխատանքի մերձեցման մասին», «Խաղաղության և պատերազմի սոցիալական հիմքերը», «Սուբյեկտիվ գործոնի աճող նշանակությունը կոմունիստական շինարարության մեջ», «Մարդու ինտելեկտուալ հնարավորությունների ձևավորման հարցի շուրջը», «Էսթետիկական պահանջմունքի բնույթի մասին» և այլն։

Վերջին տարիներին ամսագրում տեղ են գտել ոչ քիչ հոդվածներ պետության թեորիայի և իրավագիտության հարցերի շուրջը։ Հատկապես քննարկվել են սովետական պետականության, մեր հանրապետության իրավական լիազորությունների, դատարանակազմության և իրավաբանական մի շարք հարցեր և սովետական իրավունքի բարոյական սկզբունքների հետ առնչվող խնդիրներ։

Ամսագրի փիլիսոփայական թեմատիկայով նյութերի շարքում առանձնահատուկ տեղ են գրավում գիտության զարգացման արդի էտապին և նրա արդյունքներին առնչվող նյութերը։

Գիտության այս կամ այն բնագավառի, մասնավորապես արվեստագիտության, ուսումնասիրությունը հաճախ սերտորեն շաղկապվել է մյուս բնագավառների հետ։ Թերևս պատահական չէ, որ արվեստագիտական հարցերն ամսագրում առաջին անգամ արծարծվել են հնագիտական նյութերի քննության կապակցությամբ, ինչպես դա արվել է «Տեղեկագրի» առաջին տարիների համարներում զետեղված Բ. Ա. Շելկովնիկովի հոդվածներում՝ գեղարվեստական խեցեգործության մասին (1940, № 4—5, 1942, № 3—4, 6)։ Այդ հարցերը, սակայն, տարեցտարի ամսագրում ինքնուրույն և կայուն տեղ են գրավել և ահա շուրջ երկու տասնամյակ է, ինչ արվեստագիտությունը դարձել է նրա մշտական բաժիններից մեկը։ «Տեղեկագրում» («Էլրաբեր») հրատարակված շուրջ 120 ուսումնասիրություններ նվիրված են երաժշտության ու երգարվեստի, գեղանկարչության ու քանդակագործության, ճարտարապետության ու շինարարական արվեստի, թատերագիտության ու դրամատուրգիայի, կիրառական արվեստի ու գեղագիտության հարցերին և նրանց պատմությանը։

Հատկապես մեծ թվով հետազոտություններ են հրատարակվել հայ դասական և արդի երաժշտության շուրջը։ Հայկական խազերի ուսումնասիրությանը, գործիքավորման արվեստին, օպերային կերպարներին, կամերային ու գործիքային երաժշտությանը, մի շարք վայրերի ժողովրդական երգարվեստին ու գործիքներին, երաժշտական պատկերման ու արտահայտության արվեստին, կոմպոզիտորների ոճական առանձնահատկություններին նվիրված բազմաթիվ պրոբլեմատիկ հոդվածներ նպաստել են սովետահայ երաժշտության զարգացման ու նրա առջև ծառացող հարցերի լուծմանը։ Հայ երաժշտության պատմության տարբեր էտապներին նվիրված ուսումնասիրություններից բացի, ամսագրում նյութեր են զետեղվել առանձին կոմպոզիտորների երաժշտական ժառանգության, նրանց գործունեության ու ծառայությունների մասին։ Առավել շատ հոդվածներ են նվիրվել հայ երաժշտության մեծագույն երախտավորին՝ Կոմիտասին։ Առանձին հոդվածներով ամսագիրն անդրադարձել է նաև Կարա-Մուրզայի, Ա. Սպենդիարյանի, զուսան Շերամի, Ն. Տիգրանյանի ստեղծագործություններին, իսկ Արամ Խաչատրյանի արվեստին նվիրվել է երեք առանձին ուսումնասիրություն։

Հին ու հարուստ է հայ կերպարվեստի պատմությունը։ Դրա համեմատ էլ բազմազան են կերպարվեստին նվիրված նյութերը։ Ամսագրում ուսումնասիրություններ կան որմնանկարչության, քանդակագործության, սովետահայ գեղանկարչության սկզբնավորման, ինչպես նաև Բ. Սալթանովի, Մ. Սարյանի, Մոմիկի, Վ. Սուրենյանցի, Ա. Ներսիսյանի, նկարիչ Մանասների, Հ. Հով. Նաթանյանի, Հ. Կոչոյանի, Հովհ. Այվազովսկու, Ն. Հովնաթանի մասին։

Բազմաթիվ արժեքավոր հետազոտություններում վեր են հանվել հայ մանրանկարչության արվեստը, առանձին ձեռագրերի նկարազարդումները, ծաղկողների արվեստը, մանրանկարչական դպրոցների հետ առնչվող ուշագրավ հարցերը։ Մի շարք ուսումնասիրություններում զուգահեռաբար արծարծվել են հայ կերպարվեստի մասնավորապես քանդակագործության և ճարտարապետական կառույցների գեղարվեստական սինթեզների հարցերը։ Առանձին ուսումնասիրություն է նվիրվել Վ. Ի. Լենինի հուշարձանին՝ Հայաստանի ճարտարապետական կոթողների գլուխգործոցին, ինչպես և սոցիալիստական քաղաքաշինության մի շարք խնդիրներին, Ադրբեջանի ճարտարապետության նվաճումներին, հայ ճարտարապետությանը՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին։ Ամսագրում մեծ տեղ են գրավում ճարտարապետության պատմությանը, հնագույն ճարտարապետական կառույցներին ու կոթողներին, մանավանդ աշխարհիկ ու ժողովրդական ճարտարապետության հուշարձաններին նվիրված ուսումնասիրությունները։ Կիրառական արվես-

տի հարցերն արծարծող նյութերի շարքում աչքի ընկնող տեղ ունեն գորգագործության, ոսկերչության ու արծաթագործության նվիրված հոդվածները։

Ամսագրում մեծ տեղ է հատկացվել թատերագիտության հարցերին ու հայ թատրոնի պատմությանը, ականավոր դերասանների արվեստին (Պետրոս Ադամյան, Սիրանույշ, Արշակ Բուդայլյան, Սուրեն Քոչարյան, Մարտիրոս Մնակյան, Հրաչյա Ներսիսյան, Համբարձում Խաչանյան)։ Հոդվածներ են տպագրվել Դանձակի, եղիպտահայ, դպրոցական թատրոնների մասին, Մոսկվայի դեղարվեստական թատրոնի, հայ դրամատիկական ստուդիայի (Մոսկվա), ռեժիսորական արվեստի, ներկայացումների ձևավորման, Ստանիսլավսկու թատերագիտական հայացքների, սովետահայ դրամատուրգիայի զարգացման շուրջը։

Արվեստագիտության հրատապ հարցերն արծարծող նյութերի շարքում հարկ է շեշտել Ա. Ս. Խաչատրյանի «Արվեստագետի վսեմ պարտքը ժողովրդի հանդեպ» (1969, № 8) հոդվածը, ինչպես նաև արվեստագիտության, հարտարապետության ու գեղանկարչության հարցերին նվիրված մի շարք ուսումնասիրություններ, դրանց շարքում «Սուբյեկտիվիզմն արվեստում» (1969, № 2), «Արդի բաղաքաշինության զարգացման առանձնահատկություններ» (1968, № 7), «Քաղաքների ձևակերպման շուրջ» (1968, № 4) հոդվածները։

Ինչպես արվեստագիտության, այնպես էլ հասարակական գիտությունների մի շարք այլ բաղադրամասերում կատարված ուսումնասիրություններն առավել լայն ու համեմատաբար կանոնավոր հրատարակություն են ունեցել ամսագրի էջերում։ Դա հայտնի չափով վերաբերում է նաև հայ մամուլի պատմությանը։ Ընդհանուր առմամբ մամուլի պատմությանը նվիրված շուրջ հինգ տասնյակ հոդվածներ և հրապարակումներ են լույս տեսել ամսագրում։ Դրանք սկզբնապես իրենց հնչող մասով նվիրված էին բոլշևիկյան և դեմոկրատական մամուլի առանձին օրգաններին, հեղափոխական-դեմոկրատ հրապարակախոսներին։ Տարեցտարի հայ մամուլի պատմության գծով հրատարակված նյութերի ընդգրկման շրջանակն ավելի լայնանալով ներառել է նաև ռուսահայ և սփյուռքահայ մամուլը, հայկական գաղթօջախներում հրատարակված առանձին թերթերն ու ամսագրերը, ինչպես նաև դրանց գործունեության բնագավառները։

«Տեղեկագիրը» («Լրաբեր») իր հրատարակած նյութերով շատ բանով է նպաստել ոչ միայն առանձին գիտությունների, այլ նաև հայագիտության զարգացմանն ընդհանուր առմամբ։ Այստեղ խոսքն ամենից առաջ այն թեմաների մասին է, որոնք միաժամանակ շոշափում են գիտության տարբեր ասպարեզներ, քննում են այնպիսի հարցեր, որոնք հավասարապես հետաքրքրական են ոչ միայն տվյալ բնագավառի մասնագետների համար, այլ նաև հարակից, երբեմն նաև «ուրիշ» գիտություններով զբաղվողների համար։ Այս իմաստով, անշուշտ, հետաքրքրական են հին Հայաստանում մաթեմատիկայի պատմությանը նվիրված նյութերը, մաթեմատիկական երկերի թարգմանությունների նշանակության մեկնաբանման փորձերը, հայ բնափիլիսոփայության մեջ էլեմենտների երկրաչափական ուսմունքի արձագանքները ցուցահանող հոդվածները (1945, № 1—2, 3—4, 1946, № 2—3)։ Ոչ միայն հայագիտության, այլ նաև կովկասագիտության, մեր հարեան եղբայրական ժողովուրդների պատմության համար մասնավորապես արժեքավոր պետք է համարել աղվանից պատմության զանազան հարցերին նվիրված այն հոդվածները, որոնք լույս են տեսել ամսագրում՝ սկսած 1941 թ. № 3—4-ից, ինչպես նաև հայ և մյուս ժողովուրդների մշակութային առնչակցությունները լուսաբանող բազմաթիվ նյութեր։ Առավել մեծ արժեք են ներկայացնում այն ուսումնասիրությունները, որոնք նպաստեցին ուրարտագիտությանը, որի բնօրրանն իրավամբ Հայաստան է համարվում։ Կարևոր քայլեր են արվել նաև բյուզանդագիտության ուղղությամբ և հայ գիտնականների այդ քայլերը ևս արտացոլվել են ամսագրի էջերում։

Ամսագրի երկարատև գոյության ընթացքում մշակութային առնչակցությունների թեման մշտապես կենտրոնական տեղ են գրավել նրա էջերում։ Ավելի քան հարյուր գիտական ուսումնասիրություններ ու հոդվածներ են նվիրվել հայ ժողովրդի պատմական, լեզվաբանական տնտեսական կապերին՝ մյուս ժողովուրդների հետ, ինչպես և այդ ժողովուրդների պատմության և գործիչների առնչակցությունների հարցերին՝ հայ ժողովրդի ու նրա մշակույթի հետ։ Հատկապես շատ ուսումնասիրություններ են նվիրվել հայ-ռուսական բարեկամական փոխհարաբերություններին ու դարավոր կապերին։ 1941 թ. № 7-ում լույս տեսած Գուրգեն Հովնանի «Ռուսաստանը և հայ մշակույթը» հանգամանալից հոդվածից հետո ամսագիրը ավելի ու ավելի հաճախ է անդրադարձել հայ և ռուս ականավոր գործիչների, մասնավորապես գրողների ստեղծագործական կապերին (Հ. Թումանյանը և ռուս կլասիկները, Պ. Ադամյանը և ռուս կլասիկ դրամատուրգիան, Չերնիշևսկին և անցյալի 50—60-ական թվականների հայ հեղափոխական դեմոկրատիան, Մայակովսկին և սովետահայ պոեզիան,

Բելինսկին և հայ թատերական քննադատությունը, պայքար հայ թատրոնում Մ. Գորկու դրամատուրգիայի համար, Նեկրասովը և հայ պոեզիան, ռուս առաջադիմական թատրոնների դերը հայ թատրոնի զարգացման գործում, Շիրվանզադեի ստեղծագործական կապերը ռուս գրականության հետ, Բրյուսովը և Հ. Հովհաննիսյանը, Լ. Տոլստոյը՝ Ս. Սպանդարյանի գնահատմամբ, Մ. Գորկու լենինյան գնահատության արձագանքները հայ գրականության մեջ, Օստրովսկու դրամատուրգիան հայ բեմում և այլն)։ Միաժամանակ լուսաբանվել են ռուս գրողների երկերի հայերեն թարգմանության պատմության առանձին էջերը, ռուս ճանապարհորդների գրառումները Հայաստանի մասին, Հայաստանի արտացոլումը ռուսական գեղանկարչության մեջ, հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը, հրապարակվել են դրանց նվիրված նորահայտ վավերագրեր, հայ-ռուսական տնտեսական ու առևտրական կապերը պարզաբանող նյութեր։

Ուկրաինա և Հայաստան։ Հայ և ուկրաինական ժողովուրդներ։ Շատ ընդհանրություններ կան երկու երկրների ու ժողովուրդների պատմություններում, եվ այդ ընդհանրությունները երկուստեք զբաղեցրել են հայ և ուկրաինացի պատմաբաններին, մանավանդ վերջին տասնամյակներում։ Նրանց նորագույն հետազոտություններն իրենց զգալի մասով տեղ են գտել ամսագրի էջերում և կազմել այն ավանդը հայ-ուկրաինական կապերի ուսումնասիրության պատմության մեջ, որի արժեքն ու նշանակությունը բավականաչափ մեծ է։

Այդ ուղղությամբ ամսագրի նշանակալից քայլերից մեկը 1954 թ. 4-րդ համարն Ուկրաինան Ռուսաստանի հետ վերջնականապես վերամիավորելու 300-ամյակին նվիրելն էր։ Համարի մի շարք նյութեր լուսաբանում են հայ-ուկրաինական կապերը։ Դրանով փաստորեն սկսվեց այդ կապերի առավել հանգամանալից գիտական լուսաբանումն ամսագրում։ Շուտով ամսագիրն իրար հետևից հրատարակեց հայ և ուկրաինացի ուսումնասիրողների նոր արժեքավոր հոդվածները՝ Յու. Ազարենկոյի «Հետաքրքրություն Ուկրաինայում եղբայրական Հայաստանի կուլտուրայի նկատմամբ», Մ. Մուրադյանի՝ «Հայ-ուկրաինական երաժշտական կապերի պատմությունից», Ն. Կրիվոնոսի և Վ. Գրիբովեցկու՝ «Լվովի հայկական գաղութը XIV—XVII դարերում», Հ. Գալստյանի՝ «Հայ դպրոցական թատրոնն Արևմտյան Ուկրաինայում»։

Ուկրաինացի ուսումնասիրողներին իր էջերում հյուրընկալելու շնորհիվ ամսագրում երևան եկան նաև XV—XVII դդ. հայերի կիևում գտնվելու, հայ-ուկրաինական փոխհարաբերության ուսումնասիրության գործում ուկրաինական պատմագրության և Լվովի սովետական գիտնականների ներդրման մասին ընդհանրացնող հոդվածները։ Հանգամանալից ուսումնասիրություններ լույս տեսան «Հայկական աղբյուրները Ուկրաինայի քաղաքների մասին», «Շեվչենկոն և հայ-հասարակությունը», «Ուկրաինան սովետահայ պոեզիայում» թեմաներով։

Հայ-վրացական բարեկամության արմատները դարերի խորքից են գալիս։ Թերևս այդքան էլ հին է այդ կապերի ուսումնասիրության պատմությունը։ Սովետական տարիներին այդ թեման նոր ծավալ, նոր բովանդակություն ու նոր որակ է ստացել։ Դա հայտնի չափով ակնառու է նաև այն նյութերից, որոնք հրատարակվել են ամսագրի շատ համարներում։ Հայերենի և վրացերենի ընդհանրությունների ուսումնասիրությանը նվիրված Ա. Մուրվալյանի հոդվածաշարից բացի դեռևս 40-ական թվականներին ամսագրում լույս են տեսել նյութեր նվիրված Թիֆլիսի մասին հայ անանուն պատմիչի երկին, վրաց և հայոց գրական առնչակցություններին՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Գ. Սունդուկյանի ու Ավ. Իսահակյանի կապերին վրաց կլասիկների հետ։ Հաջորդ տասնամյակում այդ թեման ավելի է լայնացել։ Ամսագրում առանձին հոդվածներ են նվիրվել՝ վրաց սովետական պոեզիան, Գրիգոլ Լիլի ու հայ գրականությունը, հայ-վրացական ֆոլկլորային կապերը, Թբիլիսին որպես գիտական կենտրոն, հայ գրողները Վրաստանի և վրաց ժողովրդի մասին, ժամանակակից վրաց և հայ պատմական վեպի ընդհանրությունները թեմաներին, ինչպես և երկու ժողովուրդների գրական փոխազդեցությունների ուսումնասիրության խնդիրներին։

Հարկ է ընդգծել, որ հայ-վրացական կապերը և վրաց ժողովրդի պատմության մի շարք հարցեր ամսագրում լուսաբանվել են վրաց գիտնականների արդյունավետ մասնակցությամբ։ Բնավ պատահական չէ, որ առանձին վրաց գիտնականներ ամսագրում սկսել են հանգես գալ դեռևս նրա անդրանիկ համարներում՝ հաճախ գնահատելով նաև իրենց հայ կոլեգաների գործերը, իրենց մասնակցությունը բերելով հայագիտական առանձին հարցերի պարզաբանման, վերհանելով վրացական աղբյուրները հայերի մասին։ Մասնավորապես Ա. Շանիձեն և Իլ. Արուլաձեն հաճախ են հյուրընկալվել ամսագրի էջերում։

Հայ-ադրբեջանական գրական-մշակութային կապերը ևս իրենց արժանի տեղն են գրավել ամսագրում։ Ադրբեջանական ժողովրդական նորահայտ երգերը, ադրբեջանցու կերպարը հայ գրողների երկերում, երկու ժողովուրդների առևտրատնտեսական կապերը XVIII դ., հայ և ադրբե-

չանական գյուղացիական համատեղ ելույթները XIX դարի II կեսին հարցերը քննվել էն առանձին հոդվածներում։ Մի շարք նյութեր են նվիրվել հայ-ադրբեջանական դրական կապերին և այլն, Ընդհանրապես ամսագիրը հայ և մյուս ժողովուրդների մշակութային առնչակցություններին մշտական հոգատարությամբ է վերաբերվել, իր նեղ հնարավորությունների սահմաններում համեմատաբար մեծ տեղ է հատկացրել այդ կապերի բացահայտմանն ու գիտական ընդհանրացումներին, հանդամանորեն լուսաբանել է այդ ժողովուրդների բարեկամությունը, որ հենված է հին ժամանակներից եկող պատմական կապերի վրա։

Ամսագրի տարբեր տարիների հավաքածուներում ուսումնասիրություններ կարելի է գտնել հայ-ֆրանսիական, հայ-անգլիական, հայ-ռումինական, հայ-արաբական, հայ-էստոնական, հայ-պարսկական, հայ-բուլգարական, հայ-քրդական, հայ-հունական, հայ-հունգարական, հայ- ինդոնեզական, հայ-արխազական, հայ-լեհական, հայ-բելոռուսական փոխադարձ առնչակցությունների, դրական-մշակութային կապերի ու համագործակցությունների մասին։ Այդ թեմատիկայի բազմակողմանի ուսումնասիրության և լուսաբանման վկայությունն է նաև մյուս ժողովուրդների հին և նոր այն գործիչների ցանկը, որոնց գործունեությունն այս կամ այն չափով վեր է հանվել ամսագրի էջերում. ահա այդ ցանկը, որ արդեն թվարկվածներից բացի կարելի է լրացնել տասնյակ այլ անուններով՝ Յու. Վեսելովսկի, Յու. Լերմոնտով, Պավլո Տիչինա, Բայրոն. Ա. Ս. Պուշկին, Ա. Սուվորով, Գոգոլ, Ն. Չերնիշևսկի, Վ. Մայակովսկի, Լ. Տոլստոյ, Ա. Օստրովսկի, Վ. Բելինսկի, Մ. Գորկի, Շիլլեր, Վ. Հյուգո, Ա. Չեխով, Պ. Յավորով, Տ. Շևչենկո, Տ. Մանկովսկի, Ֆ. Ռուսլավելի, Մակվարտ։

Ի սկզբանե ամսագիրը իր գլխավոր խնդիրներից մեկն էր համարում արխիվային նորահայտ փաստաթղթերի, պատմական ու գրական արժեքավոր անտիպ վավերագրերի հրատարակումը և դրանց մեկնաբանումը, թանգարաններում և արխիվներում ստացված նոր նյութերի մուտն գիտական աշխարհին հաղորդելը։ Ուստի պատահական չէ, որ շատ նորահայտ նյութեր սկզբնապես հրապարակ են եկել ամսագրի էջերում, կամ մեկնաբանվել նրա համարներում լույս տեսած ուսումնասիրություններում։ Նյութեր են հրատարակվել Չերնիշևսկու «ճանապարհորդության», կոմս Շուլենբերգի արխիվի, Ղրիմի պատերազմի, բանվորական ընդհատակյա խմբակների, 1921 թ. Հայաստանում մղված քաղաքացիական կռիվների, Վ. Բրյուսովի արխիվի, հումանիտիության շինական աշխատանքի, Լոռու 1921 թ. ապստամբության, Արևելյան Հայաստան Ռուսաստանին միանալու, Ուկրաինական և Յուրիխի արխիվներում հայտնաբերված նորահայտ նյութերի, 1812 թ. հայրենական պատերազմի, 1915 թ. հայկական կոտորածների, Բաքվի հայ և աղրբեջանցի բնակիչներին ցույց տրված օգնության (1905), Կողբի աղահանքերի, Թիֆլիսի 1795 թ. ավերման, հայ ղաղթականների վերաբերյալ։ Պարբերաբար հաղորդումներ են զետեղվել արխիվային և թանգարանային ֆոնդերը նոր նյութերով հարստանալու մասին։

Արխիվային նոր նյութերի և առհասարակ դեռևս գիտական շրջանառության մեջ չդրված վավերագրերի հիման վրա գրված ուսումնասիրությունների շարքում աչքի են ընկնում Հայրենական մեծ պատերազմի թեմատիկայով գրված հոդվածները՝ մասնավորապես ծովակալ Հ. Իսակովի «Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում» և Սովետական Միության մարշալ Հ. Ք. Բագրամյանի ուսումնասիրությունները։

Առհասարակ «Տեղեկագրի» («Լրաբեր») էջերում հանդես են եկել ժամանակի անվանի հայ գիտնականներ։ Նրանց գիտական մեծարժեք հոդվածները զարդարել են ամսագրի համարները։

Հայագիտության երախտաշատ մշակը՝ ականավոր գիտնական Հրաչյա Աճառյանն ամսագրում հանդես է եկել նրա անդրանիկ համարներից սկսած։ 1941 թ. № 3—4-ում ամսագիրը հրատարակել է Հր. Աճառյանի «Աղվանաց գիրը» հոդվածը և Խորենացու աշխարհաբար թարգմանության մասին, իսկ հաջորդ տարում նրա էջերում անվանի գիտնականը լույս է ընծայել երկու գրախոսականներ՝ «Հայերեն նոր բառեր Թէոնի մեջ» և «Ամիրդովլաթի որդատ բառը»։ 1944 թ. 5-րդ համարից նա սկսել է ամսագրում պարբերաբար հրատարակել իր մեծարժեք ուսումնասիրությունը՝ «Հայկականքը»։ Մինչև իր մահն անվանի հայագետն ամսագրում լույս է ընծայել աշխատության Ա—Թ հատվածները (1944, № 5, 1945, № 1—2, 3—4, 1946, № 1 և 6, 1948, № 5, 1950, № 12, 1952, № 1 և 11)։

Ամսագրի 1951 թ. 4-րդ համարում ականավոր պատմագետ Հ. Մանանդյանը հանդես է եկել չնոր դիտողություններ Գառնիի հունարեն արձանագրության և հեթանոսական տաճարի մասին։ ուսումնասիրությամբ։ Վրա հասած մահը խանգարել է մեծ գիտնականի աշխատակցությունն ամսագրին, բայց նրա էջերում ետմահու լույս են տեսել Մանանդյանի վերջին ավարտուն ուսումնասիրությունները՝ «Հուստինիանոսի նովելները հայերի ժառանգման կարգի մասին», «Հայ

գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջը» (1952, № 5 և 7), «Միջօրեագծի և երկրի մակերեսի առտիճանական չափումներն ըստ հին հայկական աղբյուրների» (1953, № 6)։

Մահն ընդհատել է նաև այն ծանրակշիռ աշխատակցությունը, որ բերում էր ամսագրին մեծ հայագետ Մ. Աբեղյանը։ Բայց մինչ այդ նա ամսագրում հրատարակել է իր մեծարժեք ուսումնասիրություններից մի քանիսը՝ «Վիպական երգեր» (1940, № 4—5), «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ» (1941, № 5—6), «Կյանքի և աշխարհայեցողության փոփոխությունը 10-րդ դարի վերջում և 11-րդ դարի սկզբներում, իբրև հիմք հայոց հին գրականության վերլուծության շրջանի» (1943, № 1), «Հովհաննես Սարկավագ վարդապետ» (1944, № 1—2)։

Առավել բեղմնավոր մասնակցություն է ամսագրին ունեցել ակադեմիկոս Գ. Ղափանցյանը։ Առաջին ուսումնասիրությունը, որ նա հրատարակել է ամսագրում նվիրված է ուրարտական արձանագրությունների մի քանի հին ոճերին ու արտահայտություններին (1943, № 3)։ 1944 թ. միացյալ № 1—2 համարներում նա ռուսերեն լեզվով լույս է ընծայել «Մի խեթական առասպելի մասին կապված կոմկի և գարնան աստվածության հետ» ուսումնասիրությունը, որը հետո հրատարակեց հայերեն՝ համալսարանի գիտաշխատությունների ժողովածուում, իսկ № 6—7-ում ուրարտական Adrutha աստվածության մասին հոդվածը։ Հաջորդ տարում նա հանդես է եկել հայերենի ասորա-բաբելական բառերին նվիրված հետազոտությամբ (1945, № 3—4)։ 1946 թ. Ղափանցյանն ամսագրում հրատարակել է իր երեք ուսումնասիրությունները՝ հայոց լեզվի ծագման, հայկական ու սլավոնական և ուրարտական աստվածությունների մասին։ Լեզվի և լեզվաբանության հարցերի մասին անվանի գիտնականը հանդես է եկել նաև հետագա տարիներին (1948, № 6, 1950, № 11, 1951, № 3, 5, 6 և 7, 1954, № 1 և 9)։

Անշուշտ կարելի է շարունակել ամսագրին աշխատակցած անվանի գիտնականների ցանկը։ Այդ երկար ցանկում պատվավոր տեղ ունեն Ստ. Մալխասյանը, Հ. Ազատյանը, Հ. Գուլիքևխյանը, Ստ. Լիսիցյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Վ. Ռշտունին, Ա. Տերտերյանը և ուրիշներ։

Ամսագիրը նկատելի ծառայություն է մատուցել նաև հայ ճանաչված գիտնականների կյանքի ու գիտական ծառայությունների մասին տարբեր առիթներով հոդվածներ և այլ նյութեր հրատարակելով (Մ. Աբեղյան, Հ. Օրբելի, Ալ. Թամանյան, Խ. Սամվելյան, Արտ. Կարինյան, Ա. Ալպոյաճյան, Խ. Սարգսյան, Հ. Աւգանյան, Ա. Սաֆրաստյան, Լ. Մելիքսեթ-բեկ, Հ. Ակինյան, Հ. Մանանդյան, Վ. Ռշտունի, Գ. Սևակ, Սրբուհի Լիսիցյան, Հ. Այվազյան, Հ. Կուսիկյան, Վ. Ջալոյան, Ե. Լալայանց, Հ. Գյուլիքևխյան, Աշ. Հովհաննիսյան, Ս. Երեմյան, Ար. Հովհաննիսյան, Վ. Համբարձումյան, Ա. Ղարիբյան, Ա. Ղանալանյան)։

Անհամեմատ հարուստ է եղել ամսագրի մշտական բաժիններից մեկը՝ «Գրախոսություններ», որը երևան է եկել մինչև այժմ լույս տեսած համարյա բոլոր 332 համարներում*։ Ընդհանուր առմամբ ամսագրում հրատարակվել է շուրջ 350 գրախոսական, չհաշված բազմաթիվ ընդարձակ ու հակիրճ այն անոտացիաները, որոնք լույս են ընծայվել «Նոր գրքեր» խորագրի տակ, ինչպես նաև այն տեսությունները, որոնք ընթերցողներին ծանոթացնում են ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի, ապա նաև ՀՍՍՀ ԳԱ և այլ գիտական օջախների հրատարակություններին։ Առանձին դեպքերում խմբագրությունը հնարավորություն է տվել աշխատությունների հեղինակներին հանդես գալու իրենց դրույթների նոր հիմնավորումներով ու պաշտպանությամբ, թույլ տված սեփական սխալների բացահայտմամբ ու ճշգրտումներով։ Ուշագրավ է, որ ամսագրում գրախոսականներով հանդես են եկել թե՛ անվանի գիտնականները և թե՛ երիտասարդ գիտաշխատողները, առանձին դեպքերում նաև գրողները։ Այս բաժնում, ինչպես նաև «Նամակ խմբագրությանը» խորագրի տակ տպագրված արձագանքներում ամսագիրը երբեմն անդրադարձել է իր էջերում հրատարակված նյութերին ևս և այդպիսով ճշտել թույլ տված որոշ վրիպումներ։

Գիտությունների ակադեմիայի, նրա հասարակական գիտությունների բաժնի և առանձին ինստիտուտների ու սեկտորների կյանքը լուսաբանելու նպատակով, ամսագիրը մեծ թվով նյութեր ու ինֆորմացիաներ է զետեղել «Գիտական լրատու» բաժնում, հրատարակել է տարեկան

---

* 1966 թ. № 1-ից, երբ «Տեղեկագիրը» վերանվանվեց «Լրաբեր» և ամսագրի հերթական թվահամարների հետ միասին փակագծերում նշվեց նաև ընդհանուր համարակալումը, սխալ է թույլ տրվել։ Մինչև 1966 թ. լույս է տեսել ամսագրի 276 համար (1940 թ. 5, 1941 թ. 9, 1942 թ. 10, 1943 թ. 3, 1944 թ. 7, 1945 թ. 8, 1946 թ. 12, 1947 թ. 8, 1948 թ. 12, 1949 թ. 10, իսկ 1950—1965 թթ.՝ տարեկան 12 համար)։ Մինչդեռ 1966 թ. հունվարյան համարը կրում է № 1 (272) թվահամարը։ Սկսած այս համարից ամսագրի ընդհանուր համարակալումը ավելացվում է 5-ով, որով ուղղվում է թույլ տրված սխալը։

ժողովների ընդարձակ հաշվետվություններ, ինչպես նաև մի շարք փաստաթղթեր ու որոշումներ, վեր է լուծել գիտական հիմնարկների գործունեությունը։

Ինչպես մատնանշվեց, ամսագիրը գործող ապարատի հետ միատեղ ի սկզբանե լույս էր ընծայում նրա խմբագրական կոլեգիան, որի կազմը՝ բաղկացած Հանաչված գիտնականներից, հաստատում էր գիտությունների ակադեմիայի նախագահությունը։ Տարիների ընթացքում ամսագրի խմբագրական կոլեգիան համալրվել է։ Նրա կազմում տարբեր ժամանակներում, անդրանիկ կազմից հետո, աշխատել են նաև Հ. Գ. Ռատիկյանը (պատասխանատու խմբագիր 1940 թ. մարտից), Գ. Ն. Հովնանը, Ս. Հ. Մովսիսյանը, Մ. Գ. Ներսիսյանը (պատասխանատու խմբագիր 1944 թ. մայիսից), Խ. Ն. Մոմջյանը (պատասխանատու խմբագիր 1943 թ. փետրվարից և 1951 թ. հունվարից), Հ. Ա. Օրբելին (պատասխանատու խմբագիր 1946 թ. հունիսից), Ա. Ս. Ղարիբյանը, Գ. Ա. Ղափանցյանը, Բ. Բ. Պիոտրովսկին, Խ. Ս. Սարգսյանը, Բ. Ն. Առաքելյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը (պատասխանատու խմբագիր 1948 թ. հունվարից), Տ. Պ. Ալեքսանյանը, Հ. Ե. Թումանյանը, Ա. Ս. Տերտերյանը, Գ. Խ. Ստեփանյանը (պատասխանատու խմբագիր 1954 թ. մարտից), Մ. Մ. Մկրյանը, Ե. Պ. Աղայանը (պատասխանատու խմբագիր 1950 թ. փետրվարից և 1969 թ. հունվարից), Վ. Ա. Պարսամյանը, Տ. Ա. Ալեքսանյանը, Ս. Տ. Երեմյանը, Ռ. Վ. Զարյանը, Գ. Ն. Հովհաննիսյանը, Ա. Հ. Մարուխյանը, Հ. Գ. Ասլանյանը (պատասխանատու խմբագիր 1958 թ. հունվարից), Էդ. Բ. Աղայանը, Կ. Գ. Ղաֆադարյանը, Կ. Ս. Խուդավերդյանը, Ա. Ա. Առաքելյանը, Գ. Ա. Արովը (պատասխանատու խմբագիր 1961 թ. մայիսից), Հ. Գ. Ինճիկյանը (պատասխանատու խմբագիր 1966 թ. հունվարից), Ա. Բ. Կարինյանը, Գ. Գ. Սևակը, Ռ. Դ. Սահակյանը, Մ. Լ. Հովհաննիսյանը, Գ. Ա. Գալոյանը, Կ. Բ. Ուդումյանը, Հ. Ա. Ավետիսյանը, Պ. Հ. Հակոբյանը և Մ. Ն. Հակոբյանը։

Ամսագրի պրոֆիլը 1943 թ. հետո, երբ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծմամբ այն դարձավ հասարակական գիտությունների գծով կատարվող ուսումնասիրությունները լուսաբանող հիմնական օրգանը, նկատելի որևէ փոփոխություն չի կրել։ Որպես կանոն նյութերը հրատարակվել են հայերեն և ռուսերեն լեզուներով՝ դրանց կցելով համապատասխան լեզվով ամփոփումներ (մի կարճ ժամանակ նաև օտար լեզվով)։ Տարբեր ժամանակաշրջաններում ամսագրի տպաքանակը տատանվել է։ Նրա առաջին համարները հրատարակվել են միջին հաշվով 1200 օրինակ տպաքանակով, բայց պատերազմական տարիներին տպաքանակը նվազելով հասել է 400-ի։ Ամսագրի տպաքանակը չի կայունացել նաև ետպատերազմյան առաջին տարիներին, երբ նրա առանձին համարները լույս էին տեսնում 2000 օրինակով, բայց հիմնականում հրատարակվում էր 750—850, իսկ 1951 թ. սկսած առանձին համարներ՝ 1000 օրինակ տպաքանակով։ 1969 թ. սկզբից ամսագրի տպաքանակը սկսեց ավելանալ։ Այժմ «Լրաբերը» լույս է տեսնում ավելի քան 2400 օրինակ տպաքանակով և տարածում է գտնում ոչ միայն Սովետական Միության սահմաններում, այլ նաև բազմաթիվ արտասահմանյան երկրներում՝ Բուլղարիա, Հունգարիա, ԳԴՀ, Լեհաստան, Չեխոսլովակիա, Ռումինիա, Հարավսլավիա, Մոնղոլիա, Կուբա, Կորեա, Չինաստան, ինչպես և՝ Ամերիկա, Անգլիա, Ֆրանսիա, Ֆինլանդիա, Ճապոնիա, Եգիպտոս, Շվեդիա, Ավստրիա, Կանադա, ԳՖՀ, Ավստրալիա և շուրջ երկու տասնյակ այլ երկրներ։ Ըստ որում, արտասահմանյան շատ երկրներում ամսագիրը ստանում են ոչ միայն կենտրոնական գրադարաններում, գիտական հիմնարկներում և սփյուռքահայ մշակութային կազմակերպություններում ու խմբագրություններում, այլև բազմաթիվ գիտնականներ ու գործիչներ։ Այդպիսով «Լրաբերը» դարձել է կապի յուրահատուկ միջոց, որով արտասահմանյան գիտական հասարակայնությունը հաղորդակից է դառնում Սովետական Հայաստանում հասարակական գիտությունների ձեռք բերած այն նվաճումներին, որոնք հրատարակվում են ամսագրի էջերում։

Իր երեսնամյա գործունեության ընթացքում ամսագիրն, իհարկե, ունեցել է թերություններ, բայց նա մշտապես ձգտել է արդյունավետ օգտագործել իր հնարավորությունները, հեղինակային ակտիվի ուժերով աշխատել է լայնորեն ու ճիշտ արտացոլել հասարակական գիտությունների զարգացման ընթացքը, նպաստել սովետահայ գիտնականների բեղմնավոր գործունեությանը։ Առաջնորդվելով սովետական մամուլի ավանդույթներով, «Լրաբերը» մեծ Լենինի գաղափարների սղով լուսաբանում է հասարակական գիտությունների նվաճումները, նպաստում կոմունիստական խուսակցության և սովետական կառավարության առաջադրած խնդիրների կենսագործմանը, իր համեստ բաժինն է ներդնում կոմունիստական շինարարության գործում։

Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ